

ոչ պաշտոնական թարգմանություն

**ԿՐՈՆԻ ԿԱՄ ՀԱՄՈՋՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ**

**Guidelines for Review of Legislation Pertaining to
Religion or Belief**

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն
Երևան-2013

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն5

I. ԺՀՄԻԳ փորձագետների խորհրդի և Վեներտիկի հանձնաժողովի կողմից գործածվելիք նորմատիվային աղբյուրներ7

II. Օրենսդրության մեջ հաճախ հանդիպող հիմնական խնդիրները.....9

- Ա. Նախնական ակնարկ վիճահարույց հարցերի շուրջ.....9
- Բ. Կրոնի կամ հանդուժման արժանապատվության միջազգային չափանիշները մատնանշող հիմնական արժեքները.....12
- Գ. Կրոնը և կրթությունը (ներառյալ ֆինանսավորումը).....19
- Դ. Կրոնական/հավատքային կազմակերպությունների ինքնավարության/ինքնորոշման խնդիրը.....22
- Ե. Հոգևորականություն/կրոնական առաջնորդներ.....24
- Զ. Կրոնական/հավատքային կազմակերպությունների գրանցումը կարգավորող օրենսդրություն.....25
- Է. Մահմանափակող դրույթներ (հասարակական անվտանգություն, առողջություն և այլն).....28
- Ը. «Արտաքին» հարցեր.....30
- Թ. Պրոգելիտիստական/միսիոներական գործունեություն...31
- Ճ. Կրոնական խմբերի ֆինանսավորում/ ընդհանուր տնտեսական գործունեություն.....32
- ՃԱ. Բանտերին, ռազմական, առողջապահական և այլ պետական հաստատություններին վերաբերող հատուկ հարցեր.....34
- ՃԲ. Բացառություններ ընդհանուր կիրառության օրենքներից.....35

Պատրաստվել է կրոնի կամ հանդուժման արժանապատվության հարցերով ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ խորհրդատվական խորհրդի փորձագետների կողմից, Իրավունքի միջոցով ժողովրդավարության եվրոպական հանձնաժողովի (Վեներտիկի հանձնաժողով) աջակցությամբ: Ընդունվել է Վեներտիկի Հանձնաժողովի 59-րդ լիազուստար նիստի կողմից (Վեներտիկ, Հունիս 18-19, 2004):
 Հաստատվել է ԵԱՀԿ խորհրդարանական Վեհաժողովի ամենամյա նստաշրջանում (Եդինբուրգ, Հունիս 5-9, 2004):

Սույնը ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ «Կրոնի կամ հանդուժման արժանապատվության վերանայման ուղեցույցներ» փաստաթղթի ոչ պաշտոնական թարգմանությունն է: Փաստաթղթում արտահայտված կարծիքներն ու տեղեկատվությունը պարտադիր չէ, որ արտացոլեն ԺՀՄԻԳ դիրքորոշումն ու քաղաքականությունը:
 Թարգմանության մեջ եղած անհավաստասխանությունների դեպքում օգտվեք անգլերեն լեզվով պատրաստված պաշտոնական տարբերակից:

Թարգմանությունը՝ «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոնի Թարգմանիչ՝ Հովհաննես Հովհաննիսյան, պատմական գիտությունների թեկնածու Խմբագիր՝ Ստեփան Դանիելյան
 Թարգմանչական և խմբագրման աշխատանքներին մասնակցել է Արմինե Դավթյանը



Թարգմանությունը և տպագրությունը ֆինանսավորվել է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Փաստաթղթում արտահայտված հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ: This project was funded through a Department of State Public Affairs Section grant, and the opinions, findings and conclusions or recommendations expressed herein are those of the Authors and do not necessarily reflect those of the Department of State.

Ներածություն

III. Այլ հարցեր, որոնք կարող են առաջանալ օրենսդրական բազմազանության մեջ.....	39
Ա. Քրեական և վարչական օրենսդրություն/ իրավախախտումներ.....	39
Բ. Ազգային անվտանգություն/ահաբեկչություն.....	40
Գ. Հողօգտագործում/ գոտիավորում.....	40
Դ. Կրոնական գույքին վերաբերող վիճաբանություններ.....	41
Ե. Կրոնական կազմակերպությունների քաղաքական գործունեությունը.....	41
Զ. Ընտանեկան իրավունք.....	42
Է. Հեռարձակող լրատվամիջոցներ.....	44
Ը. Աշխատուժ.....	44
Թ. Գերեզմանոցներ.....	45
IV. Կառավարությանը կամ պառլամենտին տրամադրված տեքստի բովանդակությունը.....	46
Հավելված I. Միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերից ընտրված դրույթներ.....	48
Հավելված II. Ընտրված գրականության ցանկ.....	87
Հավելված III. Օրենսդրական նախագծերի (կամ խորհրդակցությունների) վերանայմանն ուղղված ԵԱՀԿ խմբի ընթացակարգերը.....	91

Կրոնի կամ համոզմունքի մասին օրենսդրության վերանայման ուղեցույցները պատրաստվել են Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) կրոնի և համոզմունքի ազատությունների հիմնահարցերով զբաղվող փորձագետների խորհրդատվական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամների կողմից՝ խորհրդակցելով Եվրոպայի խորհրդի համուն Ժողովրդավարության իրավունքի միջոցով Եվրոպական հանձնաժողովի (Վեներտիկի հանձնաժողով) հետ: Ուղեցույցները պատրաստվել են կրոնի կամ համոզմունքի ազատության հետ կապված օրենսդրության և օրինական նախագծերի Վեներտիկի Հանձնաժողովի և ԵԱՀԿ փորձագետների խմբի կողմից իրականացվող վերլուծական աշխատանքներին աջակցելու նպատակով: Ուղեցույցներում ներառված են Վեներտիկի հանձնաժողովի անդամների և փորձագետների խմբի մեկնաբանությունները: Ուղեցույցները չեն հանդիսանում կրոնի կամ համոզմունքի ազատությանը վերաբերող մարդու իրավունքների համապատասխան չափանիշների համար նախատեսված համապարփակ հաշվետվություն, այլ դրանք ընդհանուր ակնարկ և առաջարկություններ են այն անձանց համար, ովքեր ներգրավված են օրենսդրության վերանայման գործում:

Այս ուղեցույցները հաստատվել են 2004 թվականի հունիսի 18-ին կայացած Իրավունքի միջոցով ժողովրդավարության հաստատման եվրոպական հանձնաժողովի 59-րդ լիազումար նիստի ժամանակ և հաստատվել է 2004 թվականի հուլիսին կայացած Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության խորհրդարանական վեհաժողովի ամենամյա նիստի ժամանակ:

Ակնկալվում է, որ ժամանակի ընթացքում այս ուղեցույցները կվերանայվեն: Փորձագետների խորհրդի և Վեներտիկի հանձնաժողովը ողջունում են լրացուցիչ մեկնաբանություններն ու առա-

ջարկությունները: Ուղեցույցներում առաջարկները պետք է լինեն հստակ և պարունակեն դրանցում ավելացումներ կամ կրճատումներ իրականացնելու հիմնավորումներ: Այդ առաջարկություններում պետք է նաև հստակ նշված լինեն Ուղեցույցերի այն հատվածները, որտեղ և պետք է իրականացվեն փոփոխությունները: Առաջարկությունները պետք է ուղարկվեն փորձագետների խորհրդատվական խմբի մասնագետ դոկտոր Տ. Ջերեմի Գաննին (Dr. T. Jeremy Gunn)՝ JGunn@law.emory.edu հասցեով, ինչպես նաև Վենետիկի Հանձնաժողովի Քարտուղարություն (the Secretariat of the Venice Commission)՝ venice@coe.int հասցեով:

Այս ուղեցույցները պատրաստվել են Բելգիական կառավարության ֆինանսական աջակցությամբ:

I. ԺՀՄԻԳ փորձագետների խորհրդի և Վենետիկի հանձնաժողովի կողմից գործածվելիք նորմատիվային աղբյուրներ

Ներքոնշյալ աղբյուրներն այն առավել կարևորներն են, որոնք օրենսդրության վերլուծության ժամանակ օգտագործում և վկայակոչում են Վենետիկի Հանձնաժողովը ու փորձագետների խորհուրդը: Փորձագետների խորհրդի անդամները հատուկ ուշադրություն կդարձնեն ԵԱՀԿ պարտավորությունների կատարման վրա, երբ կիրականացնեն օրենսդրական վերլուծություններ ԵԱՀԿ անդամ պետությունների պահանջով: Ամենակարևոր աղբյուրների շարքին են դասվում ներքոնշյալ աղբյուրները¹.

Ա. Միջազգային կոնվենցիաներ, Միավորված ազգերի կազմակերպություն և ՄԱԿ մասնագիտացված գործակալություններ

- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966թ.) (ԲԲԻՄԴ);
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (1966թ.);
- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948թ.) (ՄԻՀՀ);
- Այլ միջազգային դաշնագրերից բխող համապատասխան պարտավորությունները;
- Կրոնի կամ համոզմունքների հիմքի վրա ամեն տեսակ անհանդուրժողականության և խտրականության չեզոքացման մասին հռչակագիրը (1981թ.);
- Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների կոմիտեի թիվ 22 ընդհանուր մեկնաբանությունը;
- Միավորված ազգերի կազմակերպության հատուկ զեկուցողների զեկույցները;

1. Նշված տեքստերի համար տես Հավելված I-ը ներքևում:

- Միավորված ազգերի կազմակերպության և նրա մասնագիտացված գործակալությունների լրացուցիչ փաստաթղթերը:

Բ. Եվրոպայի խորհուրդ

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին /Եվրոպական/ կոնվենցիան (1950թ.) (ՄԻՅԱԿ);
- Եվրոպայի խորհրդի լրացուցիչ փաստաթղթերը;
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները²:

Գ. ԵԱՀԿ

- ԵԱՀԿ գործընթացի պարտավորություններն ու եզրափակիչ փաստաթղթերը (մասնավորապես, 1989թ. Վենետիկի եզրափակիչ փաստաթուղթը);
- Կրոնի կամ համոզմունքի ազատությունը. կրոնական համայնքների կառուցվածքին վերաբերող օրենքները;
- Փորձագետների խորհրդի նախորդ օրենսդրական վերլուծությունները;
- ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների գծով գերագույն հանձնակատարի հանձնարարականները;
- ԵԱՀԿ այլ փաստաթղթերը:

Դ. Պետությունների լավագույն պրակտիկաները

Պետությունների փորձից կարող է բերվեն այնպիսի օրինակներ, որոնք ցույց են տալիս լավագույն պրակտիկաները:

Ե. Գիտական հետազոտություններ

Հայտնի գիտնականների գիտական հետազոտությունները կարող են մեծ արժեք ունենալ: Որոշ գիտական աշխատություններ կարելի է տեսնել Հավելված II-ում:

2. Փորձագետների խումբը վերլուծաբանների համար պատրաստել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունված հայտնի դեպքերի ընդհանուր նկարագիրը:

II. Օրենսդրության մեջ հաճախ հանդիպող հիմնական խնդիրները

Ա. Նախնական ակնարկ վիճահարույց հարցերի շուրջ

1. *Արդյո՞ք օրենսդրությունն անհրաժեշտ է:* Կարևոր է հաշվի առնել այն, որ որոշ հարցերի առնչությամբ հնարավոր է հատուկ օրենսդրության կարիք չզգացվի, և անկախ դրանից, պետությունը կարող է ընդունել որոշակի օրենքներ: Երբեմն պետությունը կրոնին վերաբերող հարցերի այս կամ այն զարգացումների դեպքում առաջարկում է հատուկ օրենսդրություն՝ ի պատասխան որևէ դեպքի առնչությամբ առաջացած հասարակական կարծիքի, չնայած նրան, որ տվյալ խնդիրը լավագույնս կարելի է լուծել հասարակ քրեական կամ վարչական լծակների միջոցով: Եթե կրոնական խմբերից որևէ մեկը ներգրավված է, օրինակ, խարդախության կամ բռնության մեջ, ապա պետության կողմից կրոնի վերաբերյալ նոր օրենքների ընդունումը չի կարող համարվել որպես խնդրի լավագույն լուծում: Այսպիսով, անհրաժեշտ է հաշվի առնել, թե խարդախության կամ բռնության վերաբերյալ ընդհանուր օրենքները կարո՞ղ են արդյոք բավարար լինել խնդրի լուծման համար՝ առանց նոր օրենսդրական ակտերի ընդունման, որոնք պետք է ուղղված լինեն կրոնական գործունեության կապակցությամբ կատարված հանցագործություններին (Տե՛ս Բաժին III.Է):

2. *«Կրոնի» սահմանումը:* Օրենսդրությունը հաճախ փորձում է սահմանել «կրոն» կամ նրա հետ առնչություն ունեցող հասկացությունները («աղանդ», «պաշտամունք», «ավանդական կրոն» և այլն): Միջազգային իրավունքի մեջ վերոնշյալ հասկացությունների համընդհանուր սահմանումներ չկան և շատ պետություններ այն սահմանելիս հաճախ բախվում են դրանց հետ կապված դժվարությունների: Իրավագիտության տեսանկյունից այս հասկացությունների սահմանումը վիճարկվում էր՝ պայմանավորված «կրոն» հասկացությանը բնորոշ անորոշությամբ: Կրոնի սահմանման ժամանակ տարածված սխալներից է Աստծո նկատմամբ

հավատի կարևորությունը: Բուլորովին հակառակը վկայող ամենավառ օրինակներից են դասական բուդդիզմը, որը թեխտական չէ, և հինդուիզմը, որը բազմաստվածային է: Բացի այդ, այնպիսի հասկացությունների կիրառումը, ինչպիսիք են «աղանդը» և «պաշտամունքը» գործածվում են առավելապես վիրավորական, քան վերլուծական իմաստով: Եթե օրենսդրության մեջ առկա են նման սահմանումներ, ապա տեքստը պետք է ուշադրությամբ քննվի՝ երաշխավորելու համար, որ այդ սահմանումները խտրական չեն և դրանք նախապատվություն չեն տալիս որևէ կրոնի կամ հիմնարար դավանանքի՝ ի հաշիվ մյուսների:

3. *Կրոն կամ դավանանք:* Միջազգային չափորոշիչներում «կրոն» հասկացությունը առանձին չի կիրառվում: Դրա փոխարեն կիրառվում է առավել լայն հասկացություն՝ «կրոն կամ դավանանք»: «Դավանանք»-ը ներառում է խոր համոզմունքներ, որոնք հիմնարար նշանակություն ունեն մարդու դերի և աշխարհի վերաբերյալ: Այսպիսով, օրինակ, աթեիզմը և ագնոստիցիզմը ևս ունեն պաշտպանության նույնպիսի իրավունք, ինչպես կրոնական համոզմունքները: Սակայն առավել հաճախ են հանդիպում այնպիսի իրավիճակներ, երբ անհավատների իրավունքներն ըստ հարկի չեն պաշտպանվում, կամ ավելի ճիշտ, ընդհանրապես չեն պաշտպանվում: Չնայած ոչ բոլոր համոզմունքներն ունեն հավասար պաշտպանության իրավունք, սակայն օրենքները պետք է վերանայվեն՝ անհավատների նկատմամբ խտրականության տեսանկյունից:

4. *Կրոնական «ծայրահեղականություն»:* Վերջին մի քանի տարիների ընթացքում բավականին մեծացել է կրոնական «ծայրահեղականության» և պետության անվտանգության հարցի կարևորությունը: Ակնառու է, որ կրոնի անունից գործող որոշ խմբեր և անհատներ ներգրավված են եղել քաղաքական բռնությունների մեջ: Անկախ նրանից, թե նրանց ձգտումները անկեղծ և կրոնական են, կամ էլ կապված են քաղաքականության և մանիպուլիացիոն գործողությունների հետ, ակնառու է, որ պետությունը պետք է համապատասխան կերպով արձագանքի նմա-

նատիպ խնդիրներին: Անշուշտ, խնդրահարույց է այն հանգամանքը, որ պետությունը «ծայրահեղականություն» հասկացությունը կարող է կիրառել ոչ միայն այն խմբերի նկատմամբ, որոնք վտանգավոր են և հաճախ բռնություններ են կիրառում, այլ նաև կարող է օգտագործել «ծայրահեղականության» մոտիվը ճնշելու համար օրինականորեն գործող կրոնական անհատներին և խմբերին, որոնց համոզմունքները կարող են պարզապես տարբեր լինել կամ տարօրինակ թվալ: Օրենսդրության կապակցությամբ կարևոր է, որ օրենքները կենտրոնանան իրական վտանգավոր գործողությունների կամ բռնությունների կիրառմանը և պետության ոստիկանությանը չօժտեն ոչ պատշաճ իշխանությամբ, որպեսզի նրանք ճնշեն իրենց համար ոչ բարեհաճ կամ անսովոր խմբերին:

5. *Մարդու իրավունքների մասին նորմերի հետ փոխկապվածությունը:* Կրոնի կամ համոզմունքի ազատությանը վերաբերող միջազգային ստանդարտները ծագում են ոչ միայն կրոնին կամ համոզմունքներին վերաբերող հատուկ համաձայնագրերից, դաշնագրերի, կոնվենցիաների, փաստաթղթերի դրույթներից, այլ այնպիսի նորմերից, ինչպիսիք են միավորումներ կազմելու, արտահայտման ազատության, ինչպես նաև ծնողների իրավունքների մասին դրույթները: Օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կրոնին վերաբերող որոշ որոշումներ անպայմանորեն չեն հիմնվել հոդված 9-ի վրա, այլ ունեցել են այլ հիմքեր: Կարևոր օրինակ է 1993 թվականին **Ղոֆմանն ընդդեմ Ավստրիայի** գործը:

6. *Հայեցողության սահմանները:* Ընդհանրապես Միջազգային չափանիշները և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան մասնավորապես ենթադրում են, որ գոյություն ունի «հայեցողության սահման», ինչը որոշ դեպքերում պետություններին իրավունք է տալիս ընդունել օրենքներ և իրականացնել այնպիսի քաղաքականություն, որոնք, ելնելով տվյալ պետության պատմական և մշակութային ժառանգությունից, կարող են տարբերվել իրարից: Չնայած նրան, որ նման հայեցողության

սկզբունքը պետք է ընդունելի լինի, այնուամենայնիվ, այն չպետք է մեկնաբանվի այնպիսի լայնությամբ, ինչը թույլ կտա խախտել մարդու իրավունքները: Չնայած, որ տարբեր պետությունների օրենսդրությունները չպետք է նույնական լինեն և պետք է որոշակի ճկունության հնարավորություն ունենան, այնուհանդերձ այդ ճկունությունը չպետք է խախտի հիմնական իրավունքները:

Բ. Կրոնի կամ համոզմունքի ազատության միջազգային չափանիշները մատնանշող հիմնական արժեքները

ԵԱԶԿ տարածաշրջանում ձևավորված է կրոնի կամ համոզմունքի ազատության ընդհանուր սկզբունքների մասին լայն փոխհամաձայնություն, որոնք կիրառվել են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային փաստթղթերում: Այս հարցի վերաբերյալ օրենսդրության ուսումնասիրության ժամանակ անպայման պետք է հաշվի առնել հետևյալ հիմնարար դրույթները, որոնք ներառում են հետևյալ հարցերը.

1. *Ներքին ազատություն (forum internum):* Հիմնական միջազգային փաստաթղթերը հավաստում են, որ «յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք»: Ի տարբերություն կրոնի՝ մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը ներքին ազատության շրջանակներում բացարձակ իրավունք է և ոչ մի դեպքում ենթակա չէ որևէ սահմանափակման: Օրինակ, կրոնական համոզմունքների ակամա բացահայտմանն ուղղված իրավական պահանջներն անթույլատրելի են: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (հոդված 18) և մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (հոդված 9) ընդունում են, որ ներքին ազատության իրավունքն իրենից ենթադրում է կրոնը կամ համոզմունքը փոխելու իրավունք: Հոդված 18-ի վերաբերյալ Միավորված ազգերի կազմակերպության մարդու իրավունքների կոմիտեի թիվ 22 (48) ընդհանուր մեկնաբանությունը նշում է, որ «կրոն կամ դավանանք ունենալու կամ ընտրելու» ազատությունն անպայմանորեն ենթադրում է կրոնի կամ համոզմունքի ընտրության հնարավորություն, ներառյալ կրոնի կամ համոզ-

մունքների փոփոխման, կամ աթեիստական հայացքների ընդունման, ինչպես նաև, սեփական կրոնին կամ համոզմունքին հետևելու իրավունք»: *Ամեն դեպքում, կրոնի կամ համոզմունքի «փոփոխման» կամ «ունենալու կամ ընդունելու» իրավունքը ներքին ազատության բացարձակ իրավունքներից է և ցանկացած օրենսդրություն, որը սահմանափակումներ է նախատեսում այս առնչությամբ, չի համապատասխանում ներքին ազատության իրավունքի պահանջներին:*

2. *Արտաքին ազատություն (forum externum):* Յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ, հրապարակավ կամ մասնավոր կարգով իր «կրոնն ու համոզմունքները դավանելու ազատության՝ պաշտանմունքի իրականացման, կրոնական ու ծիսական արարողությունների և վարդապետությունների իրականացման և ուսուցման»: (Միջազգային դաշնագիր քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, հոդվ. 18.1): Վերոնշյալ մեջբերումը ենթադրում է, որ պաշտպանված գործողությունների շրջանակը բավականին լայն է: Հետևաբար, միայն պաշտանմունքի իրականացումը կամ ծիսակատարության առանձին տարրերի պաշտպանությունը ապահովող օրենսդրությունը բավարար չէ: Բացի այդ, պետք է հիշել, որ պաշտպանության ենթակա են ինչպես կրոնական համոզմունք ունեցող անհատների իրավունքները, նույնպես և՛ ամբողջ համայնքի: Այսպիսով, անհատի կրոնական համոզմունքները կարող են պաշտպանվել անգամ այն դեպքում, երբ նրա համոզմունքները առավել խիստ են և պահանջկոտ, քան այն խմբի անդամների համոզմունքները, որին պատկանում է տվյալ անհատը: Այնուամենայնիվ, այս փաստը չի ենթադրում, որ այդ խմբի համոզմունքները արժանի չեն հարգանքի: Կրոնական համոզմունքների կամ հավատի արտահայտումը, ի տարբերություն ներքին ազատության, կարող է սահմանափակվել: Սակայն նման սահմանափակումներն էլ կարող են միայն սահմանվել խիստ սահմանափակ հանգամանքներում, որոնք ամրագրված են սահմանափակումներ ենթադրող դրույթներում: Սահմանափակումները թույլատրելի են միայն այն դեպքում, երբ դրանք

հիմնված են լինում սահմանափակման դրույթների վրա, որոնք նկարագրված են 2-րդ (է) բաժնում:

3. *Հավասարություն և անխտրականություն:* Պետություններն իրենց իրավասությունների սահմաններում պետք է հարգեն և երաշխավորեն բոլոր անհատների կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքը՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, լեզվից, կրոնից կամ համոզմունքներից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային կամ այլ պատկանելիությունից, գույքի տիրապետման, ծննդի կամ այլ կարգավիճակից: Օրենքները պետք է վերանայվեն, որպեսզի երաշխավորվի, որ կրոնների միջև ցանկացած տարբերակում հիմնված է օբյեկտիվ գործոնների վրա, և կողմնակալ վերաբերմունքը հնարավորինս նվազեցված կամ անբողջապես վերացված է: Կոնկրետ երկրի պատմության մեջ տարբեր կրոնների խաղաղացած պատմական դերի վերաբերյալ շեշտադրումը թույլատրելի է, եթե դա չի օգտագործվում խտրականության արդարացման համար:

4. *Չեզոքություն և անկողմնակալություն:* **Քեսարաբիայի միտրոպոլիայի եկեղեցին ընդդեմ Մոլդովայի** Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշման մեջ նշված է, որ «տարբեր կրոնների, հարանվանությունների և դավանանքների նկատմամբ իշխանական լիազորությունների իրականացման ժամանակ պետությունը պետք է պահպանի չեզոքություն ու անկողմնակալություն»³: Պետությունն այլ պարտականությունների շրջանակներում ևս պետք է զերծ մնա կրոնական վեճերի ժամանակ կողմերից որևիցե մեկին առաջնահերթություն տալուց: Երբ պետությունը բախվում է կրոնական կոնֆլիկտների, ապա «նմանատիպ իրավիճակներում իշխանությունների դերը ոչ թե բազմակարծության վերացման ճանապարհով առաջացած լարվածության նվազեցումն է, այլ երաշխավորելու, որ երկու մրցակցող կողմերը հանդուրժեն մեկը մյուսին»⁴: Օրենսդրության մեջ

կրոնական համայնքների կառուցվածքային հարցերի առնչությամբ չեզոքության պահանջը «բացառում է պետության կողմից կրոնական հավատի կամ այդ հավատքի արտահայտման ձևերի լեգիտիմության գնահատումը»: Այսպիսով, «պետության կողմից որևէ առաջնորդի կամ բաժանված կրոնական համայնքի առանձին մասերի նկատմամբ դրսևորվող բարեհաճ վերաբերմունքը, ինչպես նաև համայնքին կամ նրա մի մասին, հակառակ նրանց կամքի, միասնական ղեկավարության ենթարկելը կրոնի ազատության խախտում է»: Նմանապես, «ինչպես կրոնի ազատության իրավունքի կամ այդ իրավունքի այս կամ այն ասպեկտի իրագործումը ներպետական օրենսդրության համաձայն ենթադրում է նախնական լիազորություն, ապա այդ դեպքում ճանաչված եկեղեցական մարմնի ներգրավվածությունը այդ լիազորության տրամադրման ժամանակ չի համապատասխանում 9-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներին»: Ընդհանուր առմամբ, չեզոքության պահանջ նշանակում է, որ գրանցման պահանջները, որոնք ենթադրում են կրոնական կազմակերպության կանոնադրության ոչ թե ֆորմալ, այլ էական, բովանդակային վերանայում, անթույլատրելի են:

5. *Հարկադրանքի բացակայություն:* Ոչ ոք չպետք է ենթարկվի հարկադրանքի, որը կխոչընդոտի նրա կրոնի կամ համոզմունքի ազատությանը: Կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքը պաշտպանում է անհատին այնպիսի պրակտիկաներից, որոնք օգտագործում են հարկադրանքի մեթոդը՝ ոչ պատշաճ եղանակով ստիպելով անհատին փոխելու կրոնը կամ համոզմունքը կամ ոչ պատճառ եղանակով կանխելով անհատին փոխելու կրոնը կամ համոզմունքը: Պատմականորեն նման դրույթի ընդունումը հիմնականում թելադրված էր իրավական և սոցիալական ճնշումների մտահոգությամբ, որոնց հետ անհատը առավել հաճախ կարող է բախվել կրոնը փոխելիս, քան միսիոներական գործունեության համար մտահոգվելիս: Սակայն վերոնշյալ նորմը կիրառելի է, երբ երկու դեպքում էլ հարկադրանք է կիրառվում: Չնայած պետությունը կարող է ընդունել օրենքներ՝ կանխելով կաշառքները կամ այլ նյութական մոտիվացիաները,

3. Քեսարաբիայի միտրոպոլիական եկեղեցին ընդդեմ Մոլդովայի §16 (ՄԻԵԴ 2001թ.):
4. Նույն տեղում, «Շերիֆն ընդդեմ Յունաստանի» §53 (ՄԻԵԴ 1999թ.):

և այդ պարագայում վերանայված օրենսդրությունը պետք է երաշխավորի, որ առաջարկվող միջոցները ուղղված են մարդկանց պաշտպանելու կրոնի փոփոխմանն ուղղված չերաշխավորված ճնշումներից, այլ ոչ թե պետության կողմից մարդկանց նկատմամբ կիրառվող ճնշումներ են, որպեսզի մարդիկ չփոխեն իրենց հավատը: Հարկադրանքի բացակայության սկզբունքը տարածվում է նաև այնպիսի իրավական պահանջների վրա, ինչպիսիք են երդման անցկացումը, դրոշի բարձրացումը կամ պետական այնպիսի գործողություններ, որոնք ստիպում են անհատին արտահայտել կամ ընդունել այնպիսի համոզմունքներ, որոնք տարբերվում են անձի ունեցած հավատից: Օրենսդրության մեջ հարկադրական մեթոդների հետ կապված դրույթները պետք է մանրամասն ուսումնասիրության ենթարկվեն:

6. *Ծնողների և խնամակալների իրավունքները:* Պետությունը պետք է հարգի ծնողների, ինչպես նաև առկայության դեպքում օրինական խնամակալների իրավունքները, որպեսզի ապահովի նրանց համոզմունքներին համապատասխան իրենց երեխաների կրոնական և բարոյա-էթիկական դաստիարակության իրականացումը: Դրա հետ մեկտեղ յուրաքանչյուր երեխայի կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքը պաշտպանվում է նրա կարողությունների զարգացմանը համապատասխան: Հենց այդ պաշտպանության մասին էլ շեշտվում է 1981 թվականին ընդունված ՄԱԿ-ի Կրոնի կամ համոզմունքի վրա հիմնված անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման վերաբերյալ հռչակագրի 5-րդ հոդվածում և երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 14-րդ հոդվածում: Օրենսդրության վերանայումը պետք է իրականացվի այնպես, որպեսզի ապահովվի երեխայի հավասարակշռված ինքնավարությունը, ծնողների իրավունքների նկատմամբ հարգանքը և երեխայի հետաքրքրությունները: Այս իրավիճակում խնդրահարույց են օրենքի այն դրույթները, որոնք չեն կարող համապատասխան կշիռ ապահովել հասուն անչափահասների որոշումների նկատմամբ կամ միջամտում են երեխայի դաստիարակության գործում ծնողների իրավունքներին: Գոյություն չունի հստակ փոխհամաձայնեցված

միջազգային չափանիշ, թե որ տարիքից երեխաները կրոնի և համոզմունքի մասին կարող են ինքնուրույն որոշում կայացնել: Այն դեպքում, երբ օրենքը տարիք է սահմանում, ապա պարտադիր կերպով պետք է հիմնվել նաև տվյալ պետության չափահասության տարիքը սահմանող օրենքների վրա (ինչպիսիք են ամուսնության, քվեարկության և պարտադիր կերպով դպրոց այցելելու մասին օրենքները):

7. *Հանդուրժողականություն և հարգանք:* ԵԱՀԿ Վիեննայի եզրափակիչ փաստաթղթի 16(բ) սկզբունքը սահմանում է, որ մասնակից պետությունները պետք է «բարենպաստ մթնոլորտ ձևավորեն տարբեր համայնքների հավատացյալների, ինչպես նաև հավատացյալների և անհավատների միջև փոխադարձ հանդուրժողականության համար»: Օրենքները պետք է գնահատվեն այս պարտավորության կատարման տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, մարդկային արժանապատվությունը հարգելու պարտավորություն վերցրած աշխարհում սովորական հանդուրժողականությունը հազիվ թե բավարար է. նախընտրելի է անկեղծ հարգանքի մթնոլորտի ստեղծումը: Չնայած նրան, որ օրենսդրական փաստաթղթերի մեջ հանդուրժողականության ուսուցման մասին պահանջներ կամ իրավական ուժ ունեցող մեխանիզմներ գոյություն չունեն, սակայն հնարավոր է մման դրույթների ներմուծման առաջարկը լինի նպատակահարմար:

8. *Միավորման իրավունք:* ԵԱՀԿ պարտավորվել է ընդունել իրավաբանական անձի ձևավորման և պահպանման կարևորությունը⁵: Քանի որ որոշ կրոնական խմբեր սկզբունքորեն դեմ են պետության կողմից սահմանված գրանցման պահանջներին, այդ պատճառով պետությունը չպետք է կիրառի պատժամիջոցներ կամ սահմանափակումներ գրանցումից հրաժարվող խմբերի նկատմամբ: Սակայն ներկա իրավական պայմաններում կրոնական համայնքների մեծամասնությունը ձգտում է իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերել հենց միայն նրա համար, որպես-

5. Տե՛ս, օրինակ, Վիեննայի եզրափակիչ փաստաթղթի 16 (գ) սկզբունքը:

զի կարողանա իր գործունեությունը ծավալել հնարավորինս հարմար և արդյունավետ պայմաններում: Հենց իրավաբանական անձի կարգավիճակին բնորոշ կարևորության համար էլ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք որոշումներում սահմանվել է, որ կարգավիճակի ձեռքբերումը միավորման իրավունքի կարևորագույն կողմերից է⁶, և որ այդ միավորման իրավունքի տակ կարելի է հասկանալ նաև կրոնական միավորումը⁷: Համապատասխանաբար, իրավաբանական անձի կարգավիճակի ձեռքբերման իրավունքի ոչ պատշաճ սահմանափակումները համարվում են անհամատեղելի այնպիսի իրավունքների հետ, ինչպիսիք են՝ միավորման իրավունքը և կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքը (կրոնական կամ հավատքային խմբավերումների գրանցման համար տե՛ս հաջորդիվ 2-րդ (Զ) մասում):

9. Դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Կողմերը, որոնք պաշտպանում են իրենց սեփական կրոնական իրավունքները, ունեն դատական պաշտպանության արդյունավետ մեխանիզմների իրավունքներ: Այդ իրավունքները հիմնված են օրենքի գերակայության մասին ընդհանրացված պատկերացումների վրա, սակայն կոնկրետ ամրագրվել են մի շարք միջազգային նորմերի մեջ: Բացի այդ, ինչպես նշված է «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածում, պետությունները ընդհանուր պարտավորություններ ունեն մարդու իրավունքների մասին միջազգային օրենսդրական ակտերում առկա մի շարք նորմերի իրականացումն ապահովելու համար: Ավելի կոնկրետ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6 (1)-րդ և 13-րդ հոդվածներով սահմանված իրավիճակները պահանջում են, որպեսզի պաշտպանության նման արդյունավետ միջոցները մատչելի

6. Սիդիբուրգի ընդդեմ Հունաստանի (ՄԻԵԴ 1998թ.): Թուրքիայի միացյալ կոմունիստական կուսակցությունն ընդդեմ Թուրքիայի (ՄԻԵԴ 1998թ.): Գորգելիկն ընդդեմ Լեհաստանի, §55 (ՄԻԵԴ 2001թ.):

7. Տե՛ս, օրինակ, Հասանն և Չաուշն ընդդեմ Բուլղարիայի, §62 (ՄԻԵԴ 2000թ.), Բեսարաբիայի միտրոպոլական եկեղեցին ընդդեմ Մոլդովայի, §118 (ՄԻԵԴ 2001թ.):

լինեն: Դեկլարվելով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի «լույսի ներքո» մեկնաբանված 9-րդ հոդվածով՝ եվրոպական Դատարանը աջակցում է կրոնական համայնքներին իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու հարցում⁸: Այս ոլորտում հատկապես կարևոր է այն, որ վերանայվող օրենսդրությունները կամ կիրառելի վարչական դրույթները, որոնք շարադրված են առանձին օրենքներում, պետք է երաշխավորեն, որ կրոնական կազմակերպությունների դիմումները չեն ձգձգվի և նրանք բողոքարկման հնարավորություն կունենան:

Գ. Կրոնը և կրթությունը (ներառյալ ֆինանսավորումը)

Կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքների հարցում տարրական և միջնակարգ կրթությունը ամենաբարդ հարցերից մեկն է (ետմիջնակարգ կրթության ժամանակ ևս նմանատիպ խնդիրներ են ծագում, չնայած դրանք, ի համեմատություն տարրական ու միջնակարգ կրթության ժամանակ ծագող խնդիրների, շատ բարդ չեն): Կրթությանն առնչվող օրենքների վերանայումը պետք է իրականացվի այսպիսի և այլ հարցերի վերհանման դիտանկյունից, որոնք մտահոգություններ են առաջացնում միջազգային չափանիշների և ԵԱՀԿ պարտավորությունների տեսանկյունից: Առավել հաճախ (փոխկապված) հարցերը հետևյալն են.

1. *Ծնողների իրավունքները կապված իրենց երեխաների կրթության հետ*: Ընդունված է, որ ծնողներն իրավունք ունեն որոշում կայացնել իրենց երեխաների կրոնական կրթության հարցում⁹:

8. Բեսարաբիայի միտրոպոլական եկեղեցին ընդդեմ Մոլդովայի, §118 (ՄԻԵԴ 2001թ.): Կանեայի կաթոլիկ եկեղեցին ընդդեմ Հունաստանի (ՄԻԵԴ 1997թ.):

9. Տե՛ս, օրինակ, ընդհանուր մեկնաբանություն 22, §6: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, Արժանագրություն 2 հոդված 2; 1981 թ. հռչակագիր, հոդված 5; Վիեննայի եզրափակիչ փաստաթուղթ 16,7 և վերոնշյալ Բաժին 2.Բ(6):

2. *Կրոնական կրթության պետական ֆինանսավորում (կրոնական կրթությունը պետական և մասնավոր դպրոցներում, այդ թվում նաև մասնագիտացված կրոնական և այլ մասնավոր դպրոցներում):* Գոյություն ունի պետության կողմից իրականացվող պետական և մասնավոր կրոնական դպրոցներում ուսուցման ֆինանսավորման լայն պրակտիկա: Ակնառու է, որ այս դեպքում էական է այն, թե արդյոք նման ֆինանսավորումը տրամադրվում է առանց որևէ խտրականության հիմքի:

3. *Կրոնական, էթիկական կամ հումանիտար կրթությունը պետական կամ համայնքային դպրոցներում:* Պետական և համայնքային դպրոցներում գոյություն ունեն պետության կողմից իրականացվող կրոնական, էթիկական և այլ տեսակի գաղափարական կրթության տարբեր տեսակներ: Եթե հարցը քննարկվում է ծնողների իրավունքների առնչությամբ (տե՛ս վերևում Բաժին II.Բ.6), ապա չի կարելի պահանջել, որ նրանց երեխաների կրոնական կամ գաղափարական կրթությունն իրականացվի իրենց ցանկություններին հակառակ: Դրանով հանդերձ ուսումնական հաստատություններում կրոնի, համոզմունքների կամ էթիկայի մասին ընդհանուր կրթությունը թույլատրելի գործընթաց է: Որոշ երկրների կրթական համակարգերը պահանջում են, որպեսզի ուսանողներն ուսումնասիրեն կամ կրոնական, կամ էթիկական (հումանիտար) առարկաներ, ինչը համեմատաբար թույլատրելի մոտեցում է, սակայն պետությունը պետք է հաշվի առնի նաև ծնողների անհանգստությունն իրենց երեխաների կրոնական և գաղափարական դաստախարակության հարցում և պետք է հնարավորություններ ստեղծի նման առարկաներից հրաժարման համար, եթե կրթությունը կարող է վնասել կրոնական և գաղափարական համոզմունքներին: (Այնուամենայնիվ պետությունը կարող է քայլեր ձեռնարկել ընդդեմ ծայրահեղ գաղափարական ուղղությունների դեմ, ինչպիսիք են ֆաշիզմը և հակասեմիտականությունը):

4. *Կրոնական և փրկիստփայական մասնավոր դպրոցների պետական հավատարմագրումը:* Վերոնշյալ բաժին II.Բ.6-ից

հետևում է, որ ծնողներն իրենց երեխաների կրոնական կրթությունը կարող են կազմակերպել կամ մասնավոր կրոնական, կամ այլ դպրոցներում՝ ուսումնասիրելով գաղափարական արժեքները: ԵԱՀԿ անդամ երկրներում առավել տարածված ձևերից է գործունեության հնարավորությունն ընձեռումը տարբեր մասնավոր կրոնական կամ գաղափարական դպրոցներին, սակայն նման դեպքում էլ պետությունն իրավասու է սովորական առարկաների համար, ինչպիսիք են մաթեմատիկան, պատմությունը, ճշգրիտ գիտությունները և լեզուների դասավանդումը, ներկայացնել սեփական չեզոք չափանիշները: Նաև թույլատրվում է, որ պետությունը կարգավորի ուսուցիչների հավաստագրման գործընթացը: Բարդություններն ի հայտ են գալիս այն դեպքում, երբ պետությունը խտրականություն է դրսևորվում կրոնական կամ գաղափարական խմբերի նկատմամբ, որոնց թույլատրված է ղեկավարել դպրոցներ և որոնց թույլատրված չէ այդ գործունեությունը: Օրինակ, որոշ երկրներում միայն «գրանցված կրոններին» է թույլատրվում ունենալ կրոնական դպրոցներ: Չմայած կարելի է ասել, որ միայն գրանցված կրոնների կողմից կրոնական դպրոցներում ղեկավարման գործունեության իրականացման պահանջը որոշ իրավիճակներում կարող է թույլատրելի լինել: Սա անթույլատրելի կլինի միայն այն ժամանակ, երբ պետությունը խտրականություն է ցուցաբերում որոշ կրոնական խմբերի նկատմամբ: Կարևոր է պարզել, արդյո՞ք առկա օրենքները չեզոք են և խտրականության պատճառ չեն հանդիսանում:

5. *Դպրոցի ուսուցիչների և աշխատակազմի այլ անդամների աշխատանքի ընդունման և հեռացման կանոնները՝ հիմնված կրոնի կամ համոզմունքի վրա:* Մասնավոր կամ պետական դպրոցների ուսուցիչների կամ աշխատակազմի աշխատանքի ընդունման կամ հեռացման գործը (պետական և մասնավոր դպրոցներում), որտեղ կարևորագույն գործոններից մեկը կրոնը կամ հավատքն է, կարող է լինել բավականին բարդ և յուրահատուկ: Օրինակ, կրոնական դպրոցները կարող են պահանջել, որ իրենց աշխատակիցները դավանեն որոշակի կրոնի, ինչպես նաև կարող են հեռացնել նրանց, ովքեր փոխել են իրենց կրոնը կամ

զբաղվում են այնպիսի գործունեությամբ, որը չի համապատասխանում դպրոցի վարչակազմի հայացքներին: Պետությունները այդ հարցի նկատմամբ մշակել են տարբեր մոտեցումներ, իսկ օրենսդրությունը այդ մթնոլորտում շարունակում է զարգանալ (տես ներքևում Բաժիններ III.Դ և III.Ը):

6. *Կրոնական սիմվոլները (և ձևերը) պետական դպրոցներում:* Գոյություն ունեն երեք հիմնական հարցեր, որոնք ի հայտ են գալիս պետական դպրոցներում կրոնական սիմվոլների կիրառման ժամանակ: Առաջին հերթին, կան մի շարք օրինակներ, երբ պետությունը դպրոցի աշխատակիցներին և ուսուցիչներին արգելում է դասավանդման ժամանակ կրել կրոնական հագուստ: Երկրորդ. գոյություն ունեն պետության մի շարք պրակտիկաներ, որոնցով կառավարվում է դասասենյակներում կրոնական սիմվոլների տեղադրման գործընթացը: Երրորդ. առավել կարևոր է դառնում պետության կողմից աշակերտների կրոնական հագուստ կրելու արգելքը, որը վերջին ժամանակներում առավել շեշտադրվեց իսլամական գլխաշորեր կրելու հարցի կապակցությամբ: Միջազգային փաստաթղթերում այս մասին հստակ ոչինչ չկա, սակայն այս հարցն ուսումնասիրելիս պետք է լինել բավականին զգույշ՝ նկատի ունենալով հանդուրժողականության և խտրականության տարածման ընդհանուր ուղեցույցները:

Դ. Կրոնական/հավատքային կազմակերպությունների ինքնավարության/ինքնորոշման խնդիրը

Պետությունները տարբեր պրակտիկաներ ունեն կրոնական և հավատքային խմբերի ինքնավարության կամ ինքնորոշման առնչությամբ: Այս իրադրությունները կարող են տարբեր լինել՝ սկսած նրանից, որ պետությունը կարող է ձևականորեն իշխանություն ունենալ հաստատված եկեղեցիների վարդապետությունների հարցում մինչև այնպիսի իրավիճակներ, երբ պետությունը ցանկություն չունի խառնվել այնպիսի հարցերի, որոնք կրոնական կազմակերպությունը համարում է «ներքին» կամ «վարդապետական» խնդիրներ: Գոյություն ունեն միտումներ,

համաձայն որի, պետությունները պետք է սահմանափակեն իրենց միջամտությունը վարդապետական կամ աստվածաբանական խնդիրներին և այդ միտումը զարգանալու է: Առավել խելամիտ կլինեն առաջարկել, որպեսզի պետությունը բավականին զգուշությամբ ներգրավվի կրոնական խմբերի հավատքային, կրոնական կամ ներքին հարցերի քննարկումներին: Այնուամենայնիվ, երբ կրոնական կամ հավատքային խմբերի հետաքրքրությունները հակասում են հասարակական հետաքրքրություններին, ապա պետությունը պետք է հանգամանալից և խոհեմաբար հաշվի առնի հետաքրքրությունները՝ հարգելով խմբերի ինքնավարությունը, բացառությամբ այնպիսի դեպքերի, երբ այդ ինքնավարությունը կարող է ակնհայտորեն և հստակորեն վնասակար լինել: Օրինակ, երբ կրոնական խմբի վարդապետությունը արգելում է անդամներին խմբից դուրս գալ, պետությունը կարող է միջամտել՝ կրոնական խմբի կողմից իր վարդապետությունը պարտադրելու համար՝ ֆիզիկական հարկադրանքի կիրառումը խոչընդոտելու նպատակով: Անհրաժեշտ է խմբի ինքնավարությունը դիտարկել իբրև այնպիսի իրավիճակ, որտեղ սահմանափակումների վերաբերյալ վերլուծությունը պետք է կատարվի զգուշորեն (տես հաջորդիվ Բաժին II.Է): Անհրաժեշտ է նշել, որ ինքնավարության հարցերն առավել հաճախ առաջանում են այն դեպքերում, երբ կրոնական կամ հավատքային կազմակերպությունները զբաղվում են այնպիսի գործունեությամբ, ինչպիսիք են դպրոցների, հիվանդանոցների կամ բիզնեսների կառավարում և երբ անհատները հավաստիացնում են, որ իրենք նման կազմակերպությունների կողմից ենթարկվում են խտրականությունների (սեռային կողմնորոշումների կամ այս կամ այն կրոնի համոզմունքի հիման վրա): Չնայած նրան, որ կարող են կիրառվել տարբեր մոտեցումներ, այնուամենայնիվ հաստատությունների պարագայում պետք է հաշվի առնել կրոնական ինքնավարության մրցակցային նշանակությունը, ինչպես նաև կրոնի հիման վրա խտրականության չենթարկվելու քաղաքացիների իրավունքը, հատկապես այնպիսի դեպքում, երբ իրենց գործատուները իրենց գործունեության համար ստանում են պետական ֆինանսավորում կամ հարկային առավելություններ:

Ե. Հոգևորականություն/կրոնական առաջնորդներ

Պետությունները հաճախ այնպիսի օրենքներ են ընդունում, որոնք անմիջականորեն վերաբերում են հոգևորականությանը: («Հոգևորականություն» տերմինի ներքո հասկանում ենք կրոնական առաջնորդներ կամ ցանկացած կրոնի պաշտոնական դեմքեր): Առավել հաճախ հանդիպող (և փոխկապված) հարցերն են.

1. *Հոգևորականներին պետության կողմից տրվող արտոնությունները:* Բազմաթիվ պետություններ արտոնություններ են տալիս ճանաչված հոգևորականների: Այդպիսի արտոնություններից են զինվորական ծառայությունից ազատումը, ամուսնությունների (պսակի) անցկացման իրավունքի պետության կողմից լիազորումը, բանտերում, հիվանդանոցներում, կրթական և զինվորական հաստատություններում հովվական ծառայությունների մատուցման թույլտվություն, պետության կողմից աշխատավարձերի վճարումը, ինչպես նաև դատարանում վկայություն չտալու իրավունքը (օրինակ, խոստովանության գաղտնիքների չբացահայտման իրավունք): Չնայած այս արտոնությունները կիրառվում են բազմաթիվ պետությունների կողմից, այնուամենայնիվ մշտական մտահոգությունն այն է, թե արդյոք նման արտոնություններ տրամադրվում են կրոնական ու հավատքային բոլոր խմբերին՝ չեզոքության պահպանմամբ, թե՛ ոչ: Հոգևորականության դասին պատկանելության հարցի հստակեցման գործընթացը բարդ խնդիրներից է, որը առնչվում է և՛ կրոնական, և՛ աշխարհիկ կանոններին: Որոշ կրոններ ունեն աշխարհիկ ծառայողներ, որտեղ խմբի անդամներից շատերը համարվում են «հոգևորական», մինչդեռ այլ հոգևորականներ պետք է լինեն հիերարխիկ կառույցում և ունենան աստվածաբանական կրթություն ու հավաստագրում: Օրենսդրության վերնայման ժամանակ պետք է ուշադրություն դարձվի տարբեր կրոնական խմբերի միջև առկա նախընտրելիության կամ հակվածության առկայությունը (տես հաջորդիվ Բաժին II.Խ):

2. *Հոգևորականության նկատմամբ սոցիալական ապահովության և հարկային օրենքների կիրառում:* Հարկերի և կենսաթոշակների հետ առնչվող օրենսդրությունը հոգևորականության առնչությամբ կարող են մի շարք յուրահատուկ հարցերի տեղիք տալ: Չնայած այս խնդրի հետ կապված առանձին միջազգային չափորոշիչներ գոյություն չունեն, սակայն օրենսդրության վերանայումը պետք է իրականացվի մեծ հարգանք ցուցաբերել հավասարության, խտրականության բացակայության և ինքնավարության սկզբունքների նկատմամբ:

3. *Քաղաքական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումներ և արգելքներ:* Որոշ պետություններ արգելում են հոգևորականներին զբաղվել այլ քաղաքացիներին հասանելի քաղաքական գործունեությամբ, որոնցից են օրինակ քաղաքական կամ պետական պաշտոններ զբաղեցնելը: Նման օրենքները հաճախ արտացոլում են տվյալ երկրի պատմական զարգացումը և պետք է վերանայվեն յուրահատուկ կերպով:

Զ. Կրոնական/հավատքային կազմակերպությունների գրանցումը կարգավորող օրենսդրություն

1. *Կրոնական/հավատքային կազմակերպությունների գրանցումը:* Գրանցման, միավորման և այլ միջոցներով իրավաբանական անձի կարգավիճակի ձեռքբերման մասին օրենքները կրոնական կազմակերպությունների համար կարևորագույն օրենքներից են¹⁰: Ստորև ներկայացված են այդ ոլորտում առավել կարևոր խնդիրներից մի քանիսը.

- Կրոնական կազմակերպությունների գրանցումը, որպես այդպիսին, չպետք է պարտադիր լինի, չնայած նպատա-

10. Տե՛ս 2001թ. «ԵԱՀԿ տարածաշրջանում կրոնի կամ հավատքի ազատությունը. Իրավական ու պրակտիկ մարտահրավերներ» սեմինարը, http://www.osce.org/documents/odhr/2001/06/1523_en.pdf և կրոնի ազատության իրավունքի իրագործման լույսի ներքո գումարված եկեղեցի-պետություն հարաբերություններին վերաբերող մարդու իրավունքների սեմինարը իրավիված Եվրոպայի խորհրդի հանձնակատարի կողմից [http://www.coe.int/T/E/Commissioner_H.R/Communication_Unit/Documents/CommDH\(2001\)15_E.asp](http://www.coe.int/T/E/Commissioner_H.R/Communication_Unit/Documents/CommDH(2001)15_E.asp).

կահարմար է գրանցվելը՝ իրավաբանական անձի կարգավիճակի ձեռքբերման և նմանատիպ հնարավորություններ ստանալու համար;

- Անհատներին և խմբերին պետք է հնարավորություն ընձեռել դավանել սեփական կրոնն առանց գրանցման, եթե իրենք այդպես են ցանկանում;
- Իրավաբանական անձի կարգավիճակի ձեռքբերման համար չպետք է սահմանված լինեն բարձր նվազագույն անդամակցության պահանջներ;
- Գրանցման թույլտվությունը երկրում կազմակերպության երկարատև գործունեությանը պայմանավորելու պահանջը անթույլատրելի է;
- Իրավաբանական անձի կարգավիճակի ձեռքբերման համար չափազանց ծանր սահմանափակումները կամ ձգձգումները պետք է հարցականի տակ դրվեն;
- Չաստատումների կապակցությամբ պետական մարմիններին չափազանց մեծ իրավասություններ ընձեռող դրույթները անթույլատրելի են: Ոչ հստակ օրենսդրության կամ այլ պատճառներով պետության կողմից կրոնի ազատության սահմանափակումները պետք է խիստ սահմանափակվեն;
- Անթույլատրելի է միջամտությունը կրոնական կազմակերպության ներքին գործերին՝ կրոնական կազմակերպության ներքին կառուցվածքի վերանայումը, կրոնական նշանակումների հետ կապված բյուրոկրատական վերահսկողությանը կամ սահմանափակումների և նմանատիպ մեթոդների կիրառումը (տե՛ս վերևում Բաժին II.Դ);
- Չարցականի տակ պետք է դրվեն այն դրույթները, որոնք ունեն հետադարձ ուժ կամ ձախողում են կազմակերպության իրավունքների պաշտպանությունը (օրինակ, նոր չափորոշիչների համաձայն կրոնական կազմակերպության կրկնագրանցումը);
- Նոր կանոնների ներմուծման ժամանակ պետք է ստեղծվեն համապատասխան անցումային կանոններ;
- Ինքնավարության սկզբունքներին համապատասխան պետությունը չպետք է ընդունի այնպիսի որոշում, համաձայն

որի որևէ կրոնական խումբ պետք է ենթարկվի մեկ այլ կրոնական խմբի կամ կրոնները պետք է ունենան հիերարխիկ բնույթ (գրանցված կրոնական կազմակերպությունը այլ կրոնական կազմակերպության գրանցման համար չպետք է վետոյի իրավունք ունենա):

2. Կրոնական/հավատքային կազմակերպությունների արտոնություններն ու առավելությունները: Որպես կանոն, նկատի ունենալով կրոնի կամ համոզմունքի ազատության մասին սկզբունքի նշանակությունը, իրավաբանական անձի կարգավիճակի ձեռքբերումը կարգավորող օրենքները պետք է կառուցվեն այնպես, որպեսզի դուրսացնեն կրոնի կամ համոզմունքի ազատությունը: Այդ օրենքները նվազագույնը պետք է ապահովեն իրավաբանական անձի հիմնական իրավունքների մատչելիությունը: Օրինակ՝ բանկային հաշվի բացումը, կրոնական ծիսակատարությունների կամ կրոնական այլ նպատակների համար գույքի վարձակալումը կամ ձեռքբերումը, պայմանագրերի ստորագրումը, դատական գործի հարուցումը կամ հայցվոր կամ պատասխանող լինելու իրավունքը պետք է հասանելի լինի առանց լուրջ խոչընդոտների: Բազմաթիվ իրավական համակարգերում գոյություն ունեն այլ իրավական խնդիրներ, որոնք էական ազդեցություն են ունենում կրոնական կյանքի այն կողմերի վրա, որոնք հիմնականում կապված են իրավաբանական անձի կարգավիճակի ձեռքբերման հետ: Օրինակ, հողի օգտագործման իրավունքի կամ այլ պետական թույլտվությունների ձեռքբերումը, օտարազգի կրոնական առաջնորդների, աշխատակիցների, կամավորների տվյալ երկիր իրավիրելը, բանտեր, զինվորական ու առողջապահական հաստատություններ այցելությունների կազմակերպումը և հովվական ծառայությունների մատուցումը, կրթական հաստատություններ հիմնելու իրավասությունը (ինչպես երեխաների ուսուցման, այնպես էլ հոգևորականներ պատրաստելու համար), առանձին կրոնական բարեգործական կազմակերպությունների ստեղծման իրավունքը և այլն: Շատ երկրներում որոշ կրոնական կազմակերպությունների համար կարող են հասանելի լինել պետության կողմից տրամադրվող տարբեր ֆինանսական արտո-

նություններ՝ սկսած հարկերի ազատումից մինչև ուղղակի սուբսիդիաները: Որպես կանոն, վերոնշյալ արտոնությունների կամ առավելությունների հասանելիությունը չպետք է հակասի կրոնի կամ համոզմունքի ազատության իրավունքին: Այնուամենայնիվ, պետք է ուշադիր լինել, որպեսզի երաշխավորվի հակախտրակացության մասին նորմերի գործառնությունը:

3. *Լուծարման դրույթներ:* Կրոնական կազմակերպություններին պետք է աջակցել կամավոր կամ ոչ կամավոր կերպով իրավաբանական անձի կարգավիճակի լուծարման հարցում: Գործունեության ինքնակամ դադարեցումը պետք է թույլատրելի լինի: Լուծարման կարգը պետք է գրանցման կարգի հետ համաձայնեցված լինի, որպեսզի իրավաբանական անձի կարգավիճակի ձեռքբերման և պահպանման չափանիշները նման լինեն: Պետք է ուշադիր լինել, որպեսզի օրենքների մեջ առկա չլինեն անորոշ կետեր, որոնց միջոցով հնարավոր կլինի խտրական վերաբերմունքի դրսևորում ոչ հայտնի խմբերի նկատմամբ:

Է. Սահմանափակող դրույթներ (հասարակական անվտանգություն, առողջություն և այլն)

Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող միջազգային փաստաթղթերը և պետությունների սահմանադրությունները սովորաբար ոչ միայն սահմանում են կրոնի կամ համոզմունքի ազատության մասին իրավունքները, այլև այն պայմանները, որոնց դեպքում պետությունը օրինականորեն կարող է սահմանափակել նման իրավունքների իրագործումը: Ներքին ազատություններին՝ խղճի և հավատքի ազատությանը վերաբերող իրավունքները ոչ մի դեպքում պետության կողմից չի կարող սահմանափակվել (տե՛ս Բաժին II.Բ.1): Այսպիսով, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ), օրինակ, ունի «սահմանափակումների վերաբերյալ դրույթ», որը թույլատրում է կրոնի դավանման սահմանափակումներ, որոնք «սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում հասարակական անվտանգության ապահովման,

հասարակական կարգի պահպանման, առողջության կամ բարոյականության, կամ էլ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության համար» (ՄԻԵԿ, հոդված 9.2): Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում նշված սահմանափակումները պահանջում են, որ դրանք «սահմանված լինեն օրենքով և անհրաժեշտ են հասարակական անվտանգության, կարգի, առողջության, բարոյականության և այլոց հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության համար (ՔՔԻՄԴ, հոդված 18.3):

Վերլուծության մեթոդների միջազգային չափորոշիչները, որոնք կարող են լինել տարբեր՝ կախված երկրից և միջազգային փաստաթղթերի վավերացման կարգավիճակից, ներառում են երեք հիմնական հարցեր: Առաջին, արդյո՞ք սահմանափակումները սահմանված են օրենսդրությամբ, այսինքն բավարար չափով պարզաբանված է, թե ինչն է արգելված և ինչը՝ ոչ: Երկրորդ, արդյո՞ք սահմանափակման դրույթներում առկա են դրանց մասին համապատասխան հիմնավորումներ (պետք է ուշադրություն դարձնել, որ «ազգային անվտանգությունը» թույլատրելի սահմանափակող դրույթ չէ՝ համաձայն ՄԻԵԿ, հոդված 9.2-ի կամ ՔՔԻՄԴ, հոդված 18.3-ի): Երրորդ, համապատասխանում են արդյո՞ք տվյալ սահմանափակումները այն հասարակական հետաքրքրություններին, որոնց համար դրանք ստեղծված են¹¹: Օրենքները պետք է բավարարեն բոլոր այս երեք հարցերին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և ՄԱԿ Մարդու իրավունքների կոմիտեն վերջինիս կողմից հրապարակված թիվ 22 ընդհանուր մեկնաբանության մեջ նշում է, որ նման սահմանափակումները պետք է ճշգրտորեն բացատրված լինեն:

ՔՔԻՄԴ 4(2) հոդվածը սահմանում է, որ պետությունները ոչ մի կերպ չեն կարող սահմանափակել կրոնի կամ համոզմունքի

11. Համապատասխանության գաղափարի էությունը երբեմն ցույց է տրվում փոխաբերությամբ՝ գրաֆիկական եղանակով՝ կիրառելով դարբնի մուրճով ընկույզ կտրելը: Այս գործիքն իհարկե կարող է հասնել իր նպատակին՝ ճեղքել ընկույզի կեղևը, բայց ընկույզի միջուկի կորուստը ևս անխուսափելի է:

ազատության իրավունքը, ներառյալ նույնիսկ արտակարգ իրավիճակների ժամանակ: Այս կապակցությամբ կրոնի կամ հանոգմունքի ազատության իրավունքն ունի առավել առաջնահերթություն, քան արտահայտման կամ միավորման ազատության իրավունքը: Դա չի նշանակում, որ պետական այլ հետաքրքրություններ երբևէ կրոնի կամ հանոգմունքի ազատության իրավունքի նկատմամբ չեն ունենա առաջնահերթություն: Սակայն դա նշանակում է, որ արտակարգ իրավիճակներում մեկ այլ իրավունք կկարողանա առաջնահերթություն ունենա այդ հիմնական իրավունքի նկատմամբ, այն էլ միայն այն դեպքում, երբ սահմանափակման դրույթները համապատասխանում են օրենսդրությանը:

Օրենսդրության վերանայման ժամանակ պետք է ցույց տալ, թե միջազգային համաձայնագրերի, ԵԱՀԿ պարտավորությունների, պետական սահմանադրությունների և այլ օրենքների համաձայն սահմանափակող որ դրույթներն են կիրառելի: Պետական օրենսդրությունը պետք է վերանայման ենթարկվի ներքին հետևողականության գնահատման նպատակով: Արդյոք համապատասխանում է սահմանափակում ենթադրող օրենքի նախագիծը պետության սահմանադրությանը, ինչպես նաև համապատասխանում են արդյոք պետական օրենքները միջազգային պարտավորություններին¹²:

Ը. «Արտաքին» հարցեր

1. **Վիզաներ:** Պետությունները պատճառ իրավունք ունեն իրենց երկիր օտարերկրացիների մուտքի համար կանոնակարգող նորմեր սահմանել: Այս գործընթացը սովորաբար ներառում է տարբեր տեսակի վիզաների տրամադրումը: Երկրները կարող են

օրինական պատճառներ ունենալ առանձին անհատների երկրի սահմաններից ներս թողնելու համար: Եթե որոշակի կրոնական պատկանելություն ունեցող անհատները, որոնք չեն բավարարում չեզոքության չափանիշներին (կարող են հասարակական կարգի համար վտանգ հանդիսանալ կամ կարող են իրականացնել քրեորեն պատժելի գործունեություն), ապա նման անհատներին պետությունն օրինական կերպով կարող է արգելել մուտքը երկիր: Այնուամենայնիվ, եթե պետությունը մուտքի արտոնագրի մերժման համար սահմանում է բացառապես կրոնական գործոնի վրա հիմնված կատեգորիաներ, ապա դա կարող է հակասել պետության կրոնական չեզոքության մասին պարտավորություններին: Ավելին, եթե նման սահմանափակումները անձնակազմի ձևավորման գործում կարող են բարդացնել որոշակի կրոն դավանող կազմակերպություններին, ապա նման սահմանափակումները կարող են դիտվել որպես միջամտություն կրոնական կազմակերպության ներքին գործերին: Այսպիսով, կրոնական հիմքով արգելքներ (հատկապես խտրական) սահմանող վիզայի տրամադրման կանոնները պետք է հանգամանորեն վերանայվեն:

2. **Ֆինանսական փոխանցումներ:** Ինչպես վիզաների դեպքում, այնպես էլ ֆինանսական փոխանցումների ժամանակ պետությունները տարբեր իրավական պատճառներ ունեն տարբեր տեսակի ֆինանսական փոխանցումների կարգավորման համար: Այնուամենայնիվ, կրոնական հիմքերով կրոնական խմբերի նկատմամբ խտրական վերաբերմունք սահմանող դրույթները պետք է բացառվեն:

Թ. Պրոզելիտիստական/միսիոներական գործունեություն

Պրոզելիտիզմը և միսիոներական գործունեությունը բազմաթիվ երկրներում զգայուն խնդիրներ են: Կարևոր է հիշել, որ հայացքների, հավատքի և հանոգմունքների արտահայտման իրավունքը մարդկային փորձառության կենսական մասն է և այն իրագործելու իրավունքը կրոնի կամ հանոգմունքի, ինչպես նաև արտահայտման ազատության իրավունքի մասն է: Այնուամենայնիվ,

12. Միջազգային պարտավորությունների համար տե՛ս հատկապես ՔՔԻՄՂը (հոդված 18.3), ընդհանուր մեկնաբանությունը № 22 (§ 8), Անհանդուրժողականության բոլոր ձևերի վերացման մասին հռչակագիրը (հոդված 1.3), Վիեննայի եզրափակիչ փաստաթուղթը (No. 17 և No. 25 սկզբունքներ), Մոսկվայի եզրափակիչ փաստաթուղթը (§ 28.6), ՄԻԵԿը (հոդված 9.2) և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը:

որոշակի պահի կրոնական համոզմունքներ ունենալու իրավունքը կարող է հատել սահմանը և վերածվել հարկադրանքի: Այդ սահմանի հստակեցման ժամանակ կարևոր է մարդու խղճի և արտահայտման ազատության իրավունքների պաշտպանությունը: Այսպիսով, ներկայումս լուծված է համարվում, որ ավանդական դոկտրինա պրոզելիտիզմը պաշտպանված է (չնայած պրոզելիտիզմից հրաժարվող անհատներն իրավունքը նույնպես պաշտպանված է¹³): Մյուս կողմից, զինվորականների շրջանում կամ գործատուի ու աշխատակիցների միջև պաշտոնական իրավասությունների չարաշահումը համարվում է անթույլատրելի¹⁴: Եթե օրենսդրությունը սահմանափակում է միսիոներական գործունեությունը, ապա այդ սահմանափակումն արդարացված է, եթե այն կիրառում է հարկադրանք կամ դրան համարժեք վարվելակերպ կամ խաբեությանը համարժեք գործունեություն՝ անկախ կրոնական համոզմունքներից:

Ժ. Կրոնական/հավատքային խմբերի ընդհանուր տնտեսական գործունեության ֆինանսավորումը

Կրոնական և հավատքային կազմակերպությունների ֆինանսավորման հարցերում առաջանում են բազմաթիվ խնդիրներ: Ամենակարևոր խնդիրների շարքում են հետևյալները.

1. **Նվերներ ընդունելու թույլատրելիությունը և միջոցների (ֆոնդերի) մոբիլիզացման հնարավորությունը:** Պետությունների մոտ ձևավորվել է նվերների ընդունման և միջոցների մոբիլիզացման հնարավորությունների տարաբնույթ փորձ: Որոշ պետություններ միջոցների մոբիլիզացման համար տրամադրում են լայն իրավասություններ, այն դեպքում, երբ որոշ պետություններ սահմանափակում են այն գումարները, որոնք կարող են ստացվել, և ինչպես կարող են դրանք մոբիլիզացվել: Հիմնական միջազգային ուղեցույցները ներկայացնում են, որ չնայած պետու-

թյունները կարող են որոշ չափով սահմանափակել, սակայն առավել ընդունելի մոտեցումներից կարող են լինել այն, որ պետությունները հնարավորություն ընձեռեն միավորումներին միջոցները մոբիլիզացնել այնպես, որ նրանք չխախտեն հանրային այլ քաղաքականությունները: Օրենքները պետք է բացառեն խտրական մոտեցումները:

2. **Հարկային արտոնություններ:** Պետությունների համար սովորական, սակայն ոչ տարածված պրակտիկա է ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրվող հարկային արտոնությունները: Սովորաբար նման արտոնությունները լինում են երկու տեսակ: Առաջինը դա եկամտահարկից ու գույքահարկից ազատումն է: Երկրորդը անուղղակի արտոնություններն են, որոնք դոնորներին հնարավորություն են ընձեռում թվարկվածների համար ստանալ հարկային արտոնություններ: Միջազգային իրավունքում այդքան շատ չեն իրավական նորմերը, որոնք կանոնակարգում են այդ ոլորտը, չնայած որ հակախտրական նորմերը այստեղ ևս կիրառվում են:

3. **Հարկային համակարգ միջոցների մոբիլիզացման համար:** Որոշ պետություններ կրոնական կազմակերպություններին թույլ են տալիս միջոցները մոբիլիզացնել պետական հարկային համակարգի օգնությամբ: Օրինակ, (կրոնական) հանրային-իրավական կազմակերպությունները կարող են համաձայնագրեր ունենալ պետության հետ, որի արդյունքում պետությունը կրոնական կազմակերպության անդամներից հարկեր է գանձում և հավաքված միջոցները ուղղում է կրոնական կազմակերպության եկամուտներին: Հաճախ, նման համակարգերի կիրառման ժամանակ առաջանում են երկու տեսակ բարդություններ: Առաջին, արդյոք այդ համաձայնությունները չեն կարող խտրական լինել կրոնական կամ հավատքային խմբերի նկատմամբ: Երկրորդ, կարող են արդյոք սեփական հարկերը որոշակի կրոնական կազմակերպություններին հանձնելուց հրաժարվող անհատները դուրս գալ նման համակարգից: Չնայած միջազգային իրավունքը չի սահմանափակում նմանատիպ հարկային համակարգերի

13. Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի (ՄԻԵԴ 1993թ.):

14. Լարիսիսն ընդդեմ Հունաստանի (ՄԻԵԴ 1996թ.):

գործունեությունը, սակայն անհատներն էլ պետք է հնարավորություն ունենան նման համակարգերից հրաժարվելու համար (սակայն նման դեպքում նման անհատները կարող են զրկվել այդ կրոնական կազմակերպությանն անդամակցությունից):

4. Պետական ֆինանսավորում: Բազմաթիվ պետություններ ուղղակի կամ անուղղակի ապահովում են կրոնական և հավատքային կազմակերպությունների ֆինանսավորումը: Ի լրումն անուղղակի (բայց բավականին զգալի) ֆինանսական աջակցության, որոնք առաջանում են հարկային արտոնությունների և հարկերի նվազեցումների հաշվին, գոյություն ունեն կրոնական կազմակերպությունների ֆինանսավորման բազմաթիվ համակարգեր, ներառյալ հոգևորականների աշխատավարձերի վճարումը (կամ սոցիալական նպաստների տրամադրումը), կրոնական դպրոցների սուբսիդավորումը, միջոցառումների կազմակերպման ժամանակ հանրային սեփականություն հանդիսացող գույքի օգտագործման թույլատրումը և մասնավոր սեփականության նվիրատվությունը կրոնական կազմակերպություններին: Պետական ֆինանսավորման սխեման հաճախ ուղղակիորեն կապված է պետության պատմության առանձնահատկությունների հետ (ինչպես օրինակ նախկինում պետության կողմից միակողմանի կերպով բռնագրավված գույքի հետ վերադարձումը), դրա համար էլ ցանկացած գնահատման ընթացքում պետք է նրբանկատորեն վերաբերեն նման բարդ իրավիճակներին:

ԺԱ. Բանտերին, ռազմական, առողջապահական և այլ պետական հաստատություններին վերաբերող հատուկ հարցեր

Մի շարք հարցեր են ծագում պետական հաստատությունների հետ կապված, ինչպիսիք են բանտերը, ռազմական հաստատությունները և պետական հիվանդանոցները: Այդպիսի հաստատություններում կրոնական գործունեություն ծավալելու նպատակով հոգևորականության մուտքի համար (տե՛ս վերոնշյալ Բաժին II.Ե), ինչպես նաև աշխատողների իրավունքների վերա-

բերյալ հարցերին զուգահեռ (տե՛ս Բաժիններ II.Դ և III.Ը), գոյություն ունեն այդպիսի հաստատություններում գտնվող մարդկանց կրոնական արտահայտման իրավունքներին վերաբերող խնդիրներ: Ակնկալվում է, որ կրոնական համոզմունքների արտահայտման իրավունքները կարգավորող կանոնները կախված կլինեն, բնականաբար, տվյալ հաստատության բնույթից:

Պրակտիկ նպատակների համար իրավական համակարգերի մեծամասնությունը, հասարակական անվտանգության և արդյունավետության առումով, նախապատվություն են տալիս բանտերի և ռազմական կառույցների պաշտոնական անձանց կարծիքներին: Ցանկացած դեպքում պետություններն ավելի մեծ ուշադրություն են դարձնում ազատագրվածների և զինծառայողների իրավունքներին՝ հնարավորության դեպքում ստանալու իրենց կրոնին համապատասխան թույլատրված սնունդ: Հաճախ որոշ սահմանափակ ազատություններ են արտոնվում կրոնական հագուստի որոշ տեսակների համար, պայմանով, որ դա չի խանգարի բանտային հաստատություններում կարգուկանոնի պահպանմանը և չի խոչընդոտի բանակի արդյունավետ աշխատանքին: Խորհուրդ է տրվում նաև, ըստ նպատակահարմարության, օգտվել կրոնական գրականությունից և հոգևոր հարցերով խորհրդակցությունից: Վերջին հաշվով, սահմանափակումներ պետք է մտցվեն «սահմանափակումների պատշաճ վերլուծություն» անցկացնելուց հետո՝ հաշվի առնելով պետական անվտանգության հարցերի պատշաճ հնարավորությունը: Պետական հիվանդանոցների հարցում, որտեղ հասարակական անվտանգության մասին հոգածությունը ցածր է, պետությունը, բնականաբար, պետք է առավել ճկուն քաղաքականություն ներդնի և մեծ ուշադրություն դարձնի թույլատրված կրոնական սննդի և հագուստի հարցերին:

ԺԲ. Բացառություններ ընդհանուր կիրառության օրենքներից

Շատ հանգամանքներում մասնավոր անձանց կամ խմբերին դժվար է լինում ենթարկվել ընդհանուր կիրառության օրենքների

նորմերին՝ ելնելով ներքին բարոյական հակասություններից կամ խղճի հարցերի պատճառով: Որոշ անձիք կրոնական համոզմունքներից ելնելով չեն ընդունում որոշակի սնունդ, իսկ ոմանք էլ պնդում են որոշակի հագուստ կրելու պահանջը: Որոշ մարդիկ գտնում են, որ զինվորական ծառայությունը խիստ հակասում է իրենց կրոնական համոզմունքներին: Շաբաթվա որոշ օրեր կամ օրացուցային օրեր կրոնական նշանակություն ունեն, երբ որոշ ծեսեր են իրականացվում կամ էլ այդ օրերին հրաժարվում են ցանկացած աշխատանքի կատարումից: Ժամանակակից դեմոկրատական ռեժիմների մեծամասնությունը պահպանում են ազգաբնակչության մեծամասնության կրոնական ավանդույթները, իսկ շատ պետություններ հարգանքով են վերաբերվում կրոնական փոքրամասնության համոզմունքներին:

Օրենսդրությունը, որը կարգավորում է հնարավոր բացառություններն ընդհանուր կիրառության օրենքների նորմերից, գոյություն ունի երկու բազային տեսքով: Առաջինը, ընդհանուր սահմանադրական դրույթների կամ մարդու իրավունքների մասին փաստաթղթերի տեսքով, որոնք պաշտպանում են կրոնի կամ համոզմունքի ազատության հիմնական իրավունքները և կիրառվում այն դեպքում, երբ շոշափվում են խղճի հարցերը: Երկրորդ ձևն առավել յուրահատուկ է և նախատեսվում է որոշակի գործողությունների բացառություն, օրինակ, ինչպես օրենսդրորեն ամրագրել պարտադիր զինվորական ծառայություն կրելուց խուսափելու հնարավորությունը՝ նրանց համար, ում ներքին համոզմունքները հակասում են դրան (սովորաբար հիշատակվածը համատեղելի է այլ ընտրանքային ծառայություն անցնելու պահանջի հետ): Օրենքները, որոնք առնչվում են կրոնին կամ համոզմունքին, պետք է այնպես մշակվեն, որ հաշվի առնվեն մարդու իրավունքների մասին իրավունքների չափանիշներն ու սահմանադրական նորմերի հիմնարար գերակա սկզբունքները և, որ հատուկ օրենսդրական բացառությունները մշակվեն և ընդունվեն արդարացիորեն նրանց հանդեպ, ովքեր հրաժարվում են զինվորական ծառայությունից կրոնական կամ այլ համոզմունքներից ելնելով, սակայն միևնույն ժամանակ, ոչ պատշաճ բեռ չլինեն նրանց համար, ովքեր այդպիսի առարկություններ չունեն:

Ստորև բերված են առավել հավանական հարցերը, որոնք առաջանում են կապված ընդհանուր կիրառության օրենքներից բացառությունների հետ.

- **Զինվորական ծառայությունից հրաժարվելը:** Չնայած որ այս հարցի շուրջ կարգավորող միջազգային չափանիշներ չկան, ժողովրդավար պետությունների մեծամասնությունում ակնհայտ միտում է նկատվում՝ մարդկանց, որոնց բարոյական կամ կրոնական համոզմունքները հակասում են զինվորական ծառայություն կրելուն, թույլ տալ կատարել այլ ընտրանքային (ոչ զինվորական) ծառայություն: Ամեն դեպքում, երկրի օրենքները չպետք է չափազանց խիստ լինեն նրանց համար, ովքեր խղճի հիման վրա չեն կարող զինվորական ծառայություն կատարել¹⁵:
- **Սնունդ:** Սննդի որոշ տեսակներ արգելված են օգտագործել շատ կրոնական և էթիկական ավանդույթներում: Դրանցից են առհասարակ միսը, խոզի միսը, առանց որոշակի ծիսական պրակտիկաների հետևելու պատրաստված միսը, ալկոհոլային խմիչքը: Հանդուրժողականության պահպանման շրջանակներում պետությունը կարող է խթանել մարդկանց սնունդ տրամադրող հաստատություններին, ինչպիսիք են մասնավորապես դպրոցները, հիվանդանոցները, բանտերը և զինվորական հաստատությունները, որպեսզի իրենց կերակրացանկում լրացուցիչ ճաշատեսակներ ներառեն նրանց համար, ովքեր բարոյական կամ կրոնական նախապատվություններ ունեն:
- **Կրոնական գործունեության օրեր:** Գոյություն ունեն օրերի երկու տեսակներ, որոնց հետ կապված են համընդհանուր օրենքներից բացառությունները: Առաջինը շաբաթվա այն օրերն են, որոնք ունեն կրոնական նշանակություն (օրինակ, ուրբաթ օրվա աղոթքի կամ շաբաթ կամ կիրակի օրերի ժամերգությունները), երկրորդ, օրացուցային այն օրերն

15. Պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարման մասին հանձնարարական (1987) 8, ընդունվել է եւս նախարարների կոմիտեի կողմից 1987թ. ապրիլի 9-ին՝ նախարարների տեղակալների 406-րդ հանդիպման ժամանակ, <http://cm.coe.int/stat/E/Public/1987/1987r8.htm>; Մարդու իրավունքների հանձնաժողովի 1998/77 և 2002/45 որոշումներ:

են, որոնք ունեն կրոնական նշանակություն (Սուրբ Ծնունդը, Յոմ Կիպուրը, Ռամադանը): Հնարավորության սահմաններում պետական օրենքները պետք է դրսևորեն հանդուրժողականության մթնոլորտ և հարգեն կրոնական հանգմունքները:

- **Բժշկություն:** Որոշ կրոնական և հավատքային համայնքներ հրաժարվում են կիրառել բժշկական ծառայությունների որոշակի ասպեկտներ, որոնք սովորաբար իրականացվում են: Այն դեպքում, երբ շատ պետություններ թույլ են տալիս չափահասներին ինքնուրույն որոշում կայացնել բժշկական ծառայությունների այս կամ այն տեսակի մատուցման հնարավորության վերաբերյալ, պետությունները, որպես կանոն, պահանջում են, որ անչափահաս երեխաներին որոշ բժշկական ծառայություններ մատուցվեն անկախ ծնողների ցանկություններից: Նույնիսկ, եթե պետությունը նախընտրում է հաշվի չառնել ծնողների ցանկությունը այն դեպքերի առնչությամբ, երբ պետություն այդ ծառայության մատուցումը անհրաժեշտություն է համարում, ապա նա այդ կերպ վարվելու իրավունքը ունի: Այդուհանդերձ, պետք է մշակվեն օրենքներ, որոնք հաշվի կառնեն և կհարգեն նրանց շահերը, ում բարոյական հանգմունքները թույլ չեն տալիս անցնել որոշակի բժշկական պրոցեդուրաներ, նույնիսկ, եթե օրենսդրությունը չի տրամադրում պահանջվող բացառությունները:
- **Այլ:** Ի լրումն վերոնշյալ հարցերի, առարկություններ կարող են առաջանալ նաև այլ ոլորտներում՝ կապված գինվորական երդում տալու կամ երդվյալ ատենակալների գործառույթները կատարելու հետ: Հնարավորության սահմաններում պետությունը պետք է փորձի գտնել խելամիտ այլընտրանքներ, որոնք չեն ճնշի ո՛չ նրանց, ովքեր ունեն որոշակի կրոնական հայացքներ, ո՛չ էլ ազգաբնակչության մեծամասնությանը:

III. Այլ հարցեր, որոնք կարող են առաջանալ օրենսդրական բազմազանության մեջ

Վերը թվարկած խնդիրներն առավել հաճախ հանդիպում են կրոնական և հավատքային գործունեությունը կարգավորող ընդհանուր օրենսդրության վերանայման ժամանակ: Ստորև բերված են որոշ հարցեր, որոնք կարող են առաջանալ՝ կախված օրենսդրական նախագծի համատեքստից և տեսակից:

Ա. Քրեական և վարչական օրենսդրություն/ իրավախախտումներ

Որոշ պետություններ լուրջ պատժամիջոցներ են նախատեսում (լուրջ տուգանքներ կամ կալանավորում) կրոնական և հավատքային գործունեությանը վերաբերող օրենսդրության խախտման պարագայում: Չնայած վարչական նորմերի համար ոչ մեծ տուգանքները կարող են տեղին լինել, սակայն տեղին չէ հասարակ վարչական սխալների համար այնպես պատժելը, ինչպես դա կլիներ քրեական օրենքի խախտման դեպքում, կամ չափից դուրս խիստ պատժելը՝ վարչական բռնագանձումներով: Գրանցման ժամանակ փոքր սխալների համար լուրջ պատիժը, օրինակ, կդառնա հարցերի առաջացման պատճառ, թե խախտված են, արդյոք, կրոնի կամ հանգմունքի իրավունքները՝ քրեական իրավունքի սկզբունքները պահպանելու պատճառաբանությամբ: Լուրջ տուգանքները կարող են տեղին լինել այն դեպքում, երբ օրենքով արգելված գործունեություն է իրականացվում, որը սովորաբար կարգավորվում է քրեական օրենսդրությամբ (սպանության, հարձակման, զոդության կամ մարմնական վնաս հասցնելու արգելքը) և դրանք, հավանաբար, քիչ տեղին կլինեն վարչական ընթացակարգի սովորական խախտման դեպքում: Այդ դեպքում, օրինակ, շատ հավանական է, որ տեղին կլինի (չնայած, որ հնարավոր է՝ ավելորդ) օրենքի ընդունումը, որը հատուկ ձևով արգելում է ֆիզիկական հարձակումները հոգևորականության վրա կամ էլ որը արգելում է կրոնական միավորման կարգավիճակի օգտագործումը հանցագործ կառույցների քո-

դարկման նպատակով: Սակայն, ըստ ամենայնի, տեղին չէ քրեական պատասխանատվության պատժամիջոց կիրառել կրոնական միավորման գրանցման ժամանակ թույլ տված հասարակ սխալի դեպքում: Օրենսդրությունը, որը ներառում է բարդ գրանցման պահանջներ և միաժամանակ քրեական պատիժ է նախատեսում գրանցման կանոններին չհետևելու համար, լուրջ կասկածներ է հարուցում:

Բ. Ազգային անվտանգությունը/ահաբեկչություն

Չնայած նրան, որ կրոնական հիմքի վրա ազգային անվտանգությանը և կրոնական ահաբեկչությանը վերաբերող օրենսդրությունը կարող է լինել լիովին հիմնավորված, սակայն կարևոր է, որ այդպիսի օրենսդրությունը չկիրառվի այն կրոնական կազմակերպությունների դեմ, որոնք զբաղված չեն ակնհայտ քրեական կամ բռնի գործունեությամբ: Ահաբեկչության դեմ ընդունված օրենքները չպետք է օգտագործվեն իբրև պատճառ օրինական կրոնական գործունեության սահմանափակման համար:

Գ. Հողօգտագործում /գոտիավորում

Կրոնական նպատակներով շինարարության, վերակառուցման կամ գույքի օգտագործման մասին օրենսդրությունը հնարավոր է ներառի կրոնական նպատակներով հողի, գույքի օգտագործման և պատմական արժեքների (կառույցների կամ հողերի) պահպանման վերաբերյալ բարդ պետական օրենսդրական դրույթներ: Նորություն չէ, որ պետժառայողները (ազգային, ֆեդերալ կամ տեղական մակարդակների) կարող են այդպիսի օրենսդրական դրույթներն օգտագործել կրոնական կազմակերպությունների գործունեության սահմանափակման, կրոնական հաստատությունների (ուներգվածքի) կառավարման համար: Այդպիսի սահմանափակումների օրինաչափությունն իրավաբանորեն կարող է հիմնավորված և օբյեկտիվ թվալ (ինչպիսիք են ճանապարհային երթևեկության կարգավորումը, այլ շինությունների կամ գործողությունների հետ ներդաշնակությունը կամ աղ-

մուկի հետ կապված սահմանափակումները), սակայն դրանք մաս կարող են մասնակիորեն կիրառվել խտրականության նպատակով՝ ընդդեմ անցանկալի կրոնական խմբերի: Կարևոր է, որ այդպիսի օրենսդրությունը մշակվի օբյեկտիվորեն և կիրառվի նույն կերպ, ինչպես իրական օրինական (լեգիտիմ) նպատակներով:

Դ. Կրոնական գույքին վերաբերող վիճաբանություններ

Գոյություն ունեն կրոնական գույքի շուրջ վեճի երկու առավել տարածված տեսակներ: Առաջինը, երբ կրոնական գույքի սեփականության իրավունքները վիճելի են պետության կողմից նախորդող գործողությունների պատճառով, որոնք հանգեցրել են գույք բռնագրավման և այլ խմբի կամ անհատների փոխանցման: Շատ դեպքերում սա հատկապես խնդրահարույց էր նախկին կոմունիստական երկրներում: Երկրորդ տեսակը, երբ կրոնական կազմակերպության ներքին վեճը հանգեցնում է տարածայնությունների մեկ կամ մի քանի խմբերի սեփականության իրավունքների առնչությամբ: Վեճերի երկու տեսակներն էլ, ինչպես մաս դրանց հետ կապված այլ խնդիրները, հաճախ ներառում են պատմական և աստվածաբանական հարցեր: Այդպիսի վեճերը կարող են շատ բարդ լինել և փորձաքննության կարիք ունենան ոչ միայն սեփականության իրավունքների իրավական հարցերի վերաբերյալ, այլ նաև տեխնիկական՝ փաստացի հանգամանքների և վարդապետության շուրջ: Քանի որ օրենսդրությունը շոշափում է այդպիսի հարցեր, կարևոր է, որ այն մշակվի և կիրառվի որքան հնարավոր է առավել օբյեկտիվ և առանձին խմբերին չհիմնավորված արտոնություններ չտրամադրի:

Ե. Կրոնական կազմակերպությունների քաղաքական գործունեությունը

Պետությունը մոտեցումների լայն ընտրություն ունի քաղաքական գործունեության մեջ կրոնական և հավատքային կազմակերպությունների թույլատրելի դերի հարցում: Մոտեցումների

բազմազանությունը ներառում է՝ կրոնական քաղաքական կուսակցությունների արգելումը, քաղաքական գործունեության մեջ կրոնական խմբերի մասնակցության կանխումը և քաղաքական գործունեության մեջ մասնակցող կրոնական խմբերի համար հարկային արտոնությունների վերացումը: Չնայած որ այդպիսի հարցերը կարող են շատ բարդ լինել, և չնայած հնարավոր են տարբեր ընդունելի օրենքներ, այդպիսի օրենքները չպետք է մշակվեն լեգիտիմ կրոնական գործունեության իրավական արգելման ճանապարհով կամ հավատացյալների վրա անարդարացի սահմանափակումներ դնելու ճանապարհով¹⁶:

Ձ. Ընտանեկան իրավունք

Ընտանեկան իրավունքի հարցերը հաճախ տրամախաչվում են կրոնին կամ համոզմունքին առնչվող խնդիրներին: Առավել հաճախ հանդիպողը ամուսնությանն ու երեխայի խնամակալությանը վերաբերող հարցերն են: Ամուսնության առումով պետության օրենքները տարբերվում են «կրոնական» և «պետական» ամուսնությունների փոխհարաբերությունները կարգավորելու առնչությամբ (պետության կողմից ճանաչելի ամուսնությունների անցկացման հոգևորականության իրավունքի խնդիրը քննարկվել է վերոնշյալ Բաժին II.Ե-ում): Չնայած նրան, որ հնարավոր են զանազան տարբերակներ (ինչպես՝ կրոնական ամուսնությանը նախորդող ամուսնության պետական գրանցման պահանջը), օրենքները չպետք է սահմանափակումներ ստեղծեն կրոնական կամ հավատքային կազմակերպությունների համար

16. Այս հարցով առաջատար է ՄԻԵԴ Ռաֆահ Պարտիզը ընդդեմ Թուրքիայի գործը (2003թ.), ըստ որի թուրքական դատարանները լուծարել էին թուրքական ամենամեծ կուսակցություններից մեկը այն մեղադրանքով, որ այն աջակցում է իսլամական արմատականությանը, ինչպես նաև իրականացնում է Թուրքիայում շարիաթի օրենքների ներմուծման քարոզչություն: Եվրոպական դատարանը ընդունեց, որ անկախ նրանից, որ «քաղաքական կուսակցությունը ընդունում է կրոնի կողմից նրան հրամցվող բարոյական արժեքները, այն չի կարող համարվել ներքուստ թշնամական ժողովրդավարության հիմնարար սկզբունքների նկատմամբ» (§100), պետությունը կարող է լուծարել քաղաքական կուսակցությունը, եթե պետական մարմիններին հայտնի է դառնում, որ այն քաղաքական իշխանության ձեռքբերման եզրին է (§108) և եթե նրա առաջարկները հակասում են պետության սահմանադրական կարգին (§§ 59-60, 67, 93) կամ հիմնարար ժողովրդավարական սկզբունքներին (§98):

անցկացնել կրոնական ծիսակատարություններ՝ ի լրումն պետության կողմից պարտադրվող մնացած բոլոր չեզոք պահանջների (ինչպիսիք են չափահասության տարիքի հասնելը կամ ամուսնանալու պահին այլ գրանցված ամուսնության մեջ չկայանալու փաստը): Ամուսնության հետ կապված հարցերը, որոնք կարող են ծագել հետագայում, վերաբերելու են պայմանավորվածությամբ ամուսնությունների և բազմակնության արգելքների առիթով պետական սահմանափակումներին, որոնք թույլատրելի են որոշ կրոնների վարդապետությունների դիրքերից: Երեխայի խնամքի հետ կապված հարցերը կարող են կրոնական խնդիրների տեղիք տալ, երբ ծնողները պատկանում են տարբեր կրոնների և յուրաքանչյուրը ցանկանում է երեխային դաստիարակել իր կրոնական համոզմունքներին համապատասխան¹⁷: Չնայած նրան, որ պետական օրենքները կարող են անմիջականորեն չանդրադառնալ նման հարցերին, սակայն դրանք կարող են ի հայտ գալ խնամակալության հետ կապված վեճերի ժամանակ: Օրենսդրության վերլուծությունը պետք է իրականացվի չեզոքության դիրքերից և պետք է երաշխավորվի երեխայի շահերի պաշտպանվածությունը՝ առանց որևէ կրոնի մյուսի նկատմամբ նախապատվություն տալու:

Գոյություն ունեն մի շարք այլ խնդիրներ, որոնք կարող են ի հայտ գալ, երբ կրոնական վարդապետությունները հակասում են պետության օրենքներին: Օրինակ, ժառանգության վերաբերյալ պետական օրենքները կարող են հակասել կրոնական օրենքներին, երբ խնդիրը վերաբերում է ամուսիններից մեկի կողմից մահացած ամուսնու սեփականության ժառանգման իրավունքի մասին: Կամ, որոշ պետություններ սահմանափակում են մի կրոնական հայացքներ ունեցող ընտանիքների կողմից այլ դավանանք ունեցող երեխայի որդեգրման հնարավորությունները կամ ընդհանրապես սահմանափակում են որոշակի կրոն դավանող անձանց երեխաներ որդեգրելու հնարավորությունը՝ կրոնի հնարավոր վտանգավորության պատճառով: Իսլամի օրենքը, սովորաբար, ամուսնալուծությունն ամուսնու համար առավել հեշտ է

17. Տե՛ս, օրինակ, Գոֆմանն ընդդեմ Ավստրիայի (ՄԻԵԴ 1993):

դարձնում, քան դա թույլ է տրվում պետական օրենսդրության կողմից: Նմանատիպ բոլոր դեպքերում պետության օրենքները պետք է վերնայման ենթարկվեն օբյեկտիվության դիրքերից և սահմանեն, թե կրոնի դավանման իրավունքի նկատմամբ կիրառվող սահմանափակումները համարժեք են արդյոք իրավական պետության շահերին:

Է. Հեռարձակող լրատվամիջոցներ

Հեռարձակող լրատվամիջոցների հետ կապված երեք հիմնական խնդիրներն են. սեփականության իրավունքը, հասանելիությունը և այդ կրոնական համայնքների նվաստացումը կամ նրանց դեմ գործողությունների հրահրումը: Սովորաբար, միջազգային ստանդարտները հեռարձակող լրատվամիջոցների հետ կապված խնդիրների առնչությամբ կոնկրետ չեն: Հետևաբար, այս հարցում հավասարության և անխտրականության հիմնական սկզբունքները հիմնական ուղեցույցներն են: Կրոնական և հավատքային խմբերը ենթադրաբար չպետք է առանձնակի արգելքների բխվեն զանգվածային լրատվամիջոցների տնօրինման կամ դեկավարման ժամանակ: Եթե զանգվածային լրատվամիջոցները կառավարվում են պետության կողմից, ապա տարբեր կրոնական կամ հավատքային խմբերին պետք է զանգվածային լրատվամիջոցների օգտագործման հավասար հնարավորություններ ընձեռվեն: Չնայած պետությունները տարատեսակ և հաճախ հակասական քաղաքականություն կարող են կիրառել զրպարտանքի, ատելության խոսքի կամ կրոնական կամ հավատքային խմբերի հանդեպ, այդուհանդերձ, օրենքները պետք է արդարացի և անխտրական լինեն (տե՛ս ՔՔԻՄԴ, հոդված 20):

Ը. Աշխատուժ

Աշխատուժի (զբաղվածության պրակտիկայի) և կրոնի կամ համոզմունքի հարաբերությանը վերաբերող երեք հիմնական հարցերը ներառում են աշխատանքի ընդունման և այլ կադրային հարցեր, որոնք առաջին հերթին կապված են կրոնական

կամ հավատքային խմբերի հետ, երկրորդ՝ մասնավոր ձեռնարկությունների հետ, երրորդ՝ պետական հաստատությունների հետ: Քանի որ պետությունների օրենսդրություններն արգելում են խտրականությունը կրոնի կամ հավատքի հողի վրա, կրոնական և հավատքային կազմակերպությունները, ամենայն հավանականությամբ, կորոնեն ճանապարհներ հակախտրական օրենքներից ազատվելու համար, որպեսզի կարողանան աշխատանքի ընդունել և հաստիքում պահել անձանց, ում հայացքները համապատասխանում են կազմակերպության շահերին: Այս հարցի հանդեպ գոյություն ունեն մի քանի իրավական մոտեցումներ: Մասնավոր (ոչ կրոնական) ձեռնարկությունների հարցում սովորական չափանիշ է խտրականության արգելքը այնպիսի հարցերում, ինչպես աշխատանքի ընդունումն է: Գործատուներին կարող է իրավունք ընձեռվել սահմանափակել կրոնական համոզմունքների որոշ դրսևորումներ: Պետությունը կադրային քաղաքականության հարցում չպետք է խտրականության քաղաքականություն վարի, չնայած որոշ պետություններում պաշտոնյա անձանց արգելվում է կրոնական խորհրդանշաններ կրելը:

Թ. Գերեզմանոցներ

Պետություններն ունեն տարբեր պրակտիկաներ կրոնի և գերեզմանողների հետ կապված հարցերում: Որոշ դեպքերում պետություններն ամբողջովին վերահսկում են այդ ոլորտը, այլ դեպքերում՝ պատասխանատվության մեծ բաժինն ընկնում է կրոնական հաստատությունների վրա: Չնայած այս հարցը կարգավորող հստակ կանոններ գոյություն չունեն, պետությունը պետք է խուսափի կրոնական խմբերի միջև խտրականության դրսևորումներից և խելամիտ շրջանակներում թույլ տա (մասնավորապես հանրային առողջության դիրքերից) տվյալ պայմաններում կրոնական կամ դավանանքային համոզմունքների արտահայտման իրավունքների արտահայտումը:

IV. Կառավարությանը կամ պառլամենտին տրամադրված տեքստի բովանդակությունը

Յուրաքանչյուր անգամ օրենսդրական նախագծերի վերանայումն իրականացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել պետության հատուկ պահանջների վրա, եթե վերջինս դիմել է նման խորհրդի համար: Այնուամենայնիվ, որպես ընդհանուր կանոն, գոյություն ունի որոշակի թեմատիկ կառուցվածքը, համաձայն որի գրավոր վերլուծությունները պետք է սովորաբար ներկայացվեն:

1. Անել հաստատող հայտարարություն միջազգային չափանիշների և ԵԱՀԿ պարտավորությունների (որտեղ դրանք կիրառելի են) կարևորության վերաբերյալ: Միջազգային չափանիշների վերաբերյալ հակիրճ բացատրություն պետք է ներկայացվի:

2. Սահմանել այն մտահոգությունները, որոնք հանգեցրել են տվյալ օրենսդրական նախագծի մշակմանը: Կարևոր է, որ օրենքի վերանայողները հասկանան կառավարության կամ պետության մտահոգությունները, որոնք նրանց դրդել են տվյալ օրենսդրական նախագծի մշակմանը: Չափազանց կարևոր է, որ այդ մտահոգությունները ձևակերպվեն այնպես, որ դրանք լիովին ընկալվեն և գնահատվեն:

3. Նկարագրել հավաքված տեղեկատվությունը, որը հանդիսանում է տվյալ պետության փաստացի և իրավական հիմքը հանձնարարականների համար: Անհրաժեշտության դեպքում օրենսդրական վերանայումները պետք է մատնանշեն պետության ներսում այն անհատներին և խմբերին, որոնց հետ խորհրդակցություններ են անցկացվել, ներառյալ պետական ծառայողները, կառավարության պաշտոնատար անձինք, ազգային ժողովի պատգամավորները, հասարակական կազմակերպությունները, կրոնական անձինք և այլոք: Վերանայման մեջ պետք է հստակ ցույց տրվի, որ տեղեկատվություն հավաքելու համար լուրջ և հիմնավոր ջանքեր են ներդրվել և որ խորհրդակցություններ են անցկացվել տարբեր աղբյուրների հետ:

4. Պետք է վեր հանվի տվյալ հարցին վերաբերող ամբողջ պետական օրենսդրությունը: Վերանայողը պետք է լավատեղյակ լինի սահմանադրությունից, օրենսգրքերից, օրենքներից և հրամանագրերից: Խնդրին առնչվող դատական որոշումները ևս պետք է հաշվի առնվեն:

5. Սահմանել վերահսկող միջազգային գործիքները: ԵԱՀԿ համապատասխան պարտավորությունները, ինչպես նաև պետության կողմից վավերացված միջազգային փաստաթղթերը պետք է սահմանվեն:

6. Նկարագրել օրենքների նախագծերի դրական կողմերը: Այնքանով, որքանով դրական դրույթները առկա են օրենքների նախագծերի մեջ, ապա տեղին է դրանց ընդգծումը:

7. Սահմանել «չեզոք» դրույթները: Դա կօգնի պարզաբանել վերլուծության նպատակը:

8. Խնդրահարույց կողմերի սահմանում: Հավանաբար, սա կլինի վերլուծության հիմնական և ամենաերկար հատվածը: Դա կարող է կատարվել հիմնական խնդրահարույց հարցերի քննարկման ճանապարհով կամ օրենսդրական նախագծի յուրաքանչյուր բաժնի վերլուծության միջոցով: Վերլուծությունը պետք է լինի հստակ, անվիճելի և կառուցողական: Գլխավոր նպատակը առաջարկների ներկայացումն է, որոնք կօգնեն պաշտոնյաներին հասկանալու այլընտրանքները և միջազգային ստանդարտների կարևորությունը: Կարևոր է հիշել, որ վերանայողները չեն գրում այլընտրանքային կանոնական լեզվով, ավելին, նրանք մեկնաբանում են օրենքի նախագծերը առանց հատուկ բառապաշարի գործածման:

9. Օրենսդրական նախագծերի հետազոտության եզրափակիչ բաժնում շնորհակալություն պետք է հայտնել վստահության համար, որն արտահայտվել է վերլուծությունը թույլատրելու և շարունակական համագործակցություն ու աջակցություն ցուցաբերելու պատրաստակամության մեջ:

Հավելված I.

Միջազգային ու տարածաշրջանային փաստաթղթերից ընտրված դրույթներ

Ստորև բերված են առավել հաճախ օգտագործվող փաստաթղթերի դրույթները, որոնք վերաբերվում են կրոնի կամ համոզմունքի ազատությանը, արտահայտման ազատությանը և միավորումներ կազմելու ազատությանը:

ՍԱԿ և Միջազգային փաստաթղթերը

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948թ.)

Հոդված 18

Յուրաքանչյուր ոք մտքի, խղճի ու համոզմունքի ազատության իրավունք ունի. այդ իրավունքը ներառում է իր դավանանքը կամ համոզմունքները փոխելու ազատություն և իր դավանանքը կամ համոզմունքները մենակ կամ ուրիշների հետ մեկտեղ, հրապարակավ կամ գաղտնի քարոզելու, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատություն:

Հոդված 19

Յուրաքանչյուր ոք համոզմունքների ազատության և դրանք անկաշկանդ արտահայտելու իրավունք ունի. այս իրավունքը ներառում է համոզմունքներին անարգել հավատարիմ մնալու, տեղեկատվություն ու գաղափարներ որոնելու, ստանալու և լրատվության ցանկացած միջոցներով տարածելու ազատությունը՝ անկախ պետական սահմաններից:

Հոդված 20

1. Յուրաքանչյուր ոք խաղաղ հավաքների ու միություններ կազմելու իրավունք ունի:

2. Ոչ ոք չի կարող հարկադրաբար անդամակցվել որևէ միության:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (1966 թ.)

Ընդունվել է և բացվել է ստորագրման, վավերացման ու միանալու համար 1966 թվականի դեկտեմբերի 16-ին: Ուժի մեջ է մտել 1976 թվականի մարտի 23-ին:

Հոդված 2

1. Սույն Դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իր իրավազորության ներքո գտնվող բոլոր անձանց՝ սույն Դաշնագրով ճանաչված իրավունքները և ապահովել դրանք առանց որևէ խտրականության, այն է՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, սեռից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, ծննդից, գույքային կամ այլ դրությունից՝

Հոդված 4

1. Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը, և որը հայտարարված է պաշտոնապես, սույն Դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների՝ միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն

իրենց մյուս պարտավորությունների հետ և չեն հանդիսանում խտրականություն բացառապես ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի կամ սոցիալական ծագման հիմքով:

2. Այս դրույթը չի կարող հիմք ընդունվել 6, 7, 8 (1-ին և 2-րդ կետեր), 11, 15, 16 և 18-րդ հոդվածներից որևէ շեղում կատարելու համար:

3. Սույն Դաշնագրի մասնակից ցանկացած պետություն, որն օգտվում է շեղվելու իրավունքից, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարության միջնորդությամբ սույն Դաշնագրի մասնակից մյուս պետություններին անհապաղ տեղեկացնում է այն դրույթների մասին, որոնցից ինքը շեղվել է, և այդպիսի որոշում կայացնելու դրդապատճառների մասին: Նույն միջնորդի միջոցով հետագայում հաղորդում է նաև այդ շեղումը դադարեցնելու ամսաթվի մասին:

Հոդված 18

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք: Այդ իրավունքն ընդգրկում է իր ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը և միանձնյա կամ այլոց հետ համատեղ և հրապարակավ, կամ մասնավոր կարգով, իր կրոնը կամ համոզմունքը պաշտամունքի, արարողությունների, ծեսերի և քարոզչության միջոցով արտահայտելու ազատությունը:

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի այնպիսի հարկադրանքի, որը նսեմացնում է սեփական ընտրությամբ կրոն կամ համոզմունք ունենալու կամ ընդունելու ազատությունը:

3. Կրոնի կամ համոզմունքի արտահայտման ազատությունը ենթարկվում է միայն օրենքով սահմանված և հասարակական անվտանգության, կարգի, առողջության ու բարոյականության, ինչպես և այլ անձանց հիմնարար իրավունքների ու ազատու-

թյունների պահպանման համար անհրաժեշտ սահմանափակումների:

4. Սույն Դաշնագրի մասնակից պետությունները պարտավորվում են հարգել ծնողների և, համապատասխան դեպքերում, օրինական խնամակալների ազատությունը՝ ապահովելու իրենց երեխաների կրոնական ու բարոյական դաստիարակությունը սեփական համոզմունքներին համապատասխան:

Հոդված 19

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի առանց միջամտության սեփական կարծիք ունենալ:

2. Յուրաքանչյուր ոք ունի ազատ արտահայտվելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է, անկախ պետական սահմաններից, ցանկացած տեսակի տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը, լինեն դրանք բանավոր, գրավոր, թե՛ տպագիր, լինի արվեստի, թե՛ իր ընտրած ցանկացած այլ միջոցով:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նախատեսված իրավունքների իրականացումը հանգեցնում է հատուկ պարտավորությունների և պատասխանատվության: Ուստի այն ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է միայն սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ.

ա) այլ անձանց իրավունքները կամ հեղինակությունը հարգելու համար,

բ) պետական անվտանգության կամ հասարակական կարգի, կամ բնակչության առողջության, կամ բարոյականության պաշտպանության համար:

Հոդված 20.

...

2. Ազգային, ռասայական կամ կրոնական ատելության ցան-

կացած քարոզչություն, որն իրենից ներկայացնում է խտրակա-
նության, թշնամանքի կամ բռնության հրահրում, արգելվում է
օրենքով:

Յոթերորդ 26

Բոլորը հավասար են օրենքի առջև և, առանց որևէ խտրակա-
նության, ունեն օրենքով հավասար պաշտպանվածության իրա-
վունք: Այդ կապակցությամբ օրենքով պետք է արգելվի ցանկա-
ցած խտրականություն և բոլորի համար երաշխավորվի հավա-
սար ու արդյունավետ պաշտպանություն խտրականությունից
այնպիսի հիմքերով, ինչպիսին են ռասան, մաշկի գույնը, սեռը,
լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքը, ազգային
կամ սոցիալական ծագումը, գույքային դրությունը, ծնունդը կամ
այլ կարգավիճակը:

Յոթերորդ 27

Այն պետություններում, որտեղ գոյություն ունեն ազգային,
կրոնական կամ լեզվական փոքրամասնություններ, դրանց
պատկանող անձանց չի կարող մերժվել նույն խմբի այլ անդամ-
ների հետ համատեղ իրենց մշակութից օգտվելու, իրենց կրոնը
դավանելու և դրա ծեսերը կատարելու, ինչպես նաև մայրենի լե-
զուն օգտագործելու իրավունքը:

Կրոնական կամ համոզմունքների հիման վրա բոլոր ծեսերի անհանդուրժողականության և խտրականության վերացման մասին հռչակագիր

Յոթակվեթեմիս Գլխավոր Ասամբլեայի 36/55 որոշմամբ 1981թ.
նոյեմբերի 25-ին

Գլխավոր Ասամբլեան,

նկատի ունենալով, որ Միավորված Ազգերի Կազմակերպու-

թյան Կանոնադրության հիմնական սկզբունքներից մեկը, արժա-
նապատվությունը և հավասարությունը ներհատուկ են յուրա-
քանչյուր անձի և որ բոլոր անդամ-պետությունները պարտա-
վորվել են Միավորված Ազգերի Կազմակերպության հետ համա-
տեղ և ինքնուրույն գործողություններ ձեռնարկել մարդու իրա-
վունքների հարգման և պահպանման համընդհանուր խրախուս-
ման և աջակցման համար և բոլորի հիմնարար ազատություննե-
րը՝ առանց ռասայի, սեռի, լեզվի և կրոնի խտրականության,

նկատի ունենալով, որ մարդու իրավունքների Յանդեհիա-
նուր հռչակագրում և մարդու իրավունքների մասին Միջազգա-
յին դաշնագրերում հռչակվում են մարդու իրավունքների մասին
օրենքի առաջ անխտրականության և հավասարության սկզ-
բունքները և մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատու-
թյան իրավունքը,

նկատի ունենալով, որ մարդու իրավունքների և հիմնարար
ազատությունների անտեսումը և խախտումը, մասնավորապես
մտքի, խղճի, կրոնի կամ ցանկացած տեսակի համոզմունքների
ազատության իրավունքները, համարվում են մարդկության պա-
տերազմների և ծանր տառապանքների ուղղակի կամ անուղղա-
կի պատճառները, հատկապես, երբ դրանք այլ պետությունների
ներքին գործերի մեջ խառնվելու արտասահմանյան պետություն-
ների միջոց են ծառայում և հանգեցնում են ազգերի և պետու-
թյունների միջև ատելության հրահրմանը,

նկատի առնելով, որ կրոնը և համոզմունքները յուրաքանչ-
յուրի համար համարվում են կյանքի նրա ընկալված հիմնական
մասնիկներից մեկը և որ կրոնի և համոզմունքների ազատությու-
նը պետք է լիարժեքորեն պահպանվեն և երաշխավորեն, կարևոր
համարելով կրոնի և համոզմունքների ազատությունների հար-
ցերում ըմբռնման, համբերատարության և հարգանքով աջակցե-
լու կարևորությունը, և հասնել կրոնի և համոզմունքների՝
Կանոնադրության, ՄԱԿ-ի այլ համապատասխան փաստաթղթե-
րի և սույն Յոթակազրի նպատակների և սկզբունքների հետ ան-

համատեղելիորեն օգտագործման անթույլատրելիությանը,

լինելով վստահ նրանում, որ կրոնի կամ համոզմունքների ազատությունը նաև պետք է համագործակցի համընդհանուր խաղաղության նպատակների ձեռքբերումներին, սոցիալական արդարությանն ու ազգերի միջև եղբայրությանն ու գաղութայնության գաղափարաբանության և պրակտիկայի ու ռասայական խտրականության վերացմանը,

բավարարվածությամբ նշելով որոշ կոնվենցիաների ընդունումն ու որոշների ուժի մեջ մտնելը, Միավորված Ազգերի Կազմակերպության և մասնագիտացված հաստատակարգերի հովանու ներքո, խտրականության տարատեսակ ձևերի վերացման մասին,

անհանգստացած լինելով կրոնի կամ համոզմունքների հարցերում անհանդուրժողականության դրսևորումներով և խտրականության առկայությամբ, որը դեռևս առկա է աշխարհի որոշ հատվածներում,

լցված վճռականությամբ՝ գործադրելու բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի շատ արագ վերացվի այդպիսի անհանդուրժողականությունն իր բոլոր ձևերով ու դրսևորումներով, և կանխարգելելու կրոնի կամ համոզմունքների հիման վրա խտրականությունը և պայքարելու դրա դեմ,

հռչակում է կրոնի կամ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության և խտրականության բոլոր ձևերի վերացման մասին սույն Հռչակագիրը.

Հոդված 1.

1. Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մտքի, խղճի և համոզմունքի ազատության: Այդ իրավունքը ներառում է ցանկացած տեսակի՝ ըստ սեփական ընտրության կրոն կամ համոզմունքներ

ունենալու ազատություն և սեփական կրոնը դավանելու ազատություն և սեփական համոզմունքները՝ ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ հաղորդակցման մեջ արտահայտելու ազատություն, հրապարակավ կամ մասնավոր կարգով, պաշտամունքի կատարման, կրոնական և ծիսական արարողությունների և ուսմունքի իրականացման ազատություն:

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի հարկադրանքի, ինչը նսեմացնում է ըստ սեփական ընտրության կրոն կամ համոզմունքներ ունենալու նրա ազատությունը:

3. Կրոն դավանելու կամ համոզմունքներ արտահայտելու ազատությունը ենթակա է սոսկ այն սահմանափակումներին, որոնք հաստատված են օրենքով և անհրաժեշտ են հասարակական անվտանգության, կարգի, առողջության և բարոյականության, ինչպես և այլ անձանց իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանման համար:

Հոդված 2.

1. Ոչ ոք կրոնի կամ այլ համոզմունքների հիման վրա չպետք է ենթարկվի խտրականության՝ ցանկացած պետության, հաստատությունների, մարդկանց խմբերի կամ առանձին անձանց կողմից:

2. Սույն Հռչակագրի նպատակներով՝ «կրոնի և համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության և խտրականության» արտահայտությունը նշանակում է ցանկացած տարբերություն, բացառիկություն, սահմանափակում կամ նախապատվության ճանաչում կրոնի կամ համոզմունքների հիման վրա, ինչպես նաև նպատակ ունենալ կամ հետապնդել հավասարության հիմքով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչման, կիրառման կամ իրագործման ոչնչացումը կամ խոչընդոտումը:

Չոդված 3.

Կրոնի կամ համոզմունքների հիման վրա մարդկանց խտրականությունը մարդկային անհատականության արժանապատվության անարգում է և Միացյալ Ազգերի Կազմակերպության Կանոնադրության սկզբունքների մերժում, և դատապարտվում է որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում, որոնք հռչակվել են մարդու իրավունքների Յանընդհանուր Չռչակագրում և հանգամանորեն շարադրված են մարդու իրավունքների մասին Միջազգային պայմանագրերում և պետությունների միջև բարեկամական և խաղաղ հարաբերությունների խոչընդոտ են:

Չոդված 4.

1. Բոլոր պետություններն արդյունավետ միջոցներ պետք է ձեռնարկեն կրոնի կամ համոզմունքների հիման վրա խտրականության կանխարգելման և վերացման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների ճանաչման և իրականացման համար՝ քաղաքացիական, տնտեսական, քաղաքական, մշակութային և սոցիալական կյանքի բոլոր ոլորտներում:

2. Բոլոր պետությունները գործադրում են բոլոր ջանքերը օրենսդրության ընդունման կամ մերժման համար, երբ այն անհրաժեշտ է՝ ցանկացած նմանատիպ խտրականությունն արգելելու համար, ինչպես նաև ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները տվյալ բնագավառում կրոնի կամ այլ համոզմունքների հիման վրա անհանդուրժողականության դեմ պայքարելու համար:

Չոդված 5.

1. Ծնողները, կամ էլ համապատասխան դեպքերում երեխայի օրինական խնամակալները իրավունք ունեն ընտանիքի շրջանակներում որոշել կենսակերպը՝ սեփական կրոնի կամ համոզ-

մունքներին համապատասխան, ինչպես նաև ելնելով բարոյական դաստիարակությունից, որն, ըստ իրենց կարծիքի պետք է ստանա երեխան:

2. Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի կրոնի կամ համոզմունքների բնագավառում կրթություն ստանալու՝ համաձայն նրա ծնողների, կամ էլ համապատասխան դեպքերում օրինական խնամակալների ցանկությունների, և չպետք է նրան պարտադրել հակառակ ծնողների կամ օրինական խնամակալների ցանկության կրոնի կամ համոզմունքների բնագավառում կրթության, ընդ որում, գլխավոր սկզբունքներն են համարվում երեխայի շահերը:

3. Երեխան պաշտպանված է կրոնի կամ համոզմունքների հիման վրա խտրականության ցանկացած դրսևորումից: Նա պետք է դաստիարակվի ըմբռնողության, հանդուրժողականության, ազգերի միջև համերաշխության, խաղաղության և համընդհանուր եղբայրության ոգով, այլ անձանց կրոնների կամ համոզմունքների ազատության հանդեպ հարգանքի ոգով. ինչպես նաև այն բանի լիարժեք գիտակցմամբ, որ իր էներգիան և ընդունակությունները պետք է նվիրվեն այլ մարդկանց բարօրությանը ծառայելուն:

4. Եթե երեխան չի գտնվում սեփական ծնողների կամ օրինական խնամակալների խնամքի տակ, ապա ինչպես հարկն է, հաշվի է առնվում կրոնի կամ համոզմունքների հարցերում նրանց կողմից արտահայտված կամքը կամ նրանց կամքի ցանկացած դրսևորում, ընդ որում, գլխավոր սկզբունքը համարվում է երեխայի շահը:

5. Կրոնի կամ համոզմունքների պրակտիկան, որոնցում դաստիարակվում է երեխան, չպետք է վնաս հասցնի ո՛չ նրա ֆիզիկական, ո՛չ մտավոր առողջությանը, ո՛չ էլ նրա լիարժեք զարգացմանը՝ սույն Չռչակագրի հոդված 1 կետ 3-ի պահպանմամբ:

Հողված 6.

Համաձայն սույն Հռչակագրի հողված 1-ի և հողված 1-ի կետ 3 դրույթների՝ մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատության իրավունքը մասնավորապես ներառում է, հետևյալ ազատությունները.

ա) պաշտամունքներ կատարել կամ հավաքվել կրոնի կամ համոզմունքների հետ կապված և այդ նպատակների համար վայրեր ունենալ,

բ) ստեղծել և սպասարկել համապատասխան բարեգործական կամ մարդասիրական հաստատություններ,

գ) համապատասխան չափով առարկաներ և նյութեր արտադրել, ձեռք բերել և օգտագործել՝ կրոնական ծեսերի կամ ավանդույթների, համոզմունքների հետ կապված,

դ) այդ բնագավառներում համապատասխան հրապարկումներ գրել, թողարկել և տարածել,

ե) կրոնի կամ համոզմունքներ հարցերի շուրջ դասավանդումներ կատարել այն վայրերում, որոնք համապատասխանում են այդ նպատակին,

զ) խնդրանքով դիմել և առանձին անձանցից և կազմակերպություններից ստանալ կամավոր ֆինանսական և այլ նվիրատվություններ,

է) իրավահաջորդության համաձայն համապատասխան ղեկավարներ պատրաստել, նշանակել կամ ընտրել՝ համաձայն այս կամ այն կրոնի կամ համոզմունքների պահանջների և նորմերի,

ը) պահպանել հանգստի օրերը և նշել տոներն ու ծեսերը՝ այս կամ այն կրոնի կամ համոզմունքների կանոնների համաձայն,

թ) կրոնի և համոզմունքների հետ կապված հարցերում հաստատել և պահպանել կապերն անհատների և համայնքների հետ՝ ազգային և միջազգային մակարդակներում:

Հողված 7.

Սույն Հռչակագրում հռչակված իրավունքները և ազատու-

թյունները ազգային օրենսդրությամբ այնպես են ներկայացվում, որպեսզի յուրաքանչյուր մարդ կարողանա պրակտիկայում օգտվել այդպիսի իրավունքներից և ազատություններից:

Հողված 8.

Սույն Հռչակագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի ցանկացած իրավունքից սահմանափակման կամ նահանջի իմաստով, ինչպես դա սահմանված է մարդու իրավունքների Համընդհանուր Հռչակագրում և մարդու իրավունքների մասին Միջազգային պայմանագրերում:

ՄԱԿ մարդու իրավունքների կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն № 22

Մարդու իրավունքների կոմիտե, ընդհանուր մեկնաբանություն 22, հողված 18 (48-րդ նստաշրջան, 1993թ.): Ընդհանուր մեկնությունների և ընդհանուր հանձնարարականների ժողովածու, ընդունվել է Մարդու իրավունքների համաձայնագրերով զբաղվող մարմինների կողմի, U.N.Doc.HRI/GEN/1/Rev.1 at 35 (1994թ.):

1. Մտքի, խղճի և կրոնի ազատությունը (ներառյալ համոզմունքների ազատությունը), որը նախատեսված է հողվածի 18-ի 1 կետում, բավական ընդարձակ է և խորը, այն բոլոր հարցերով ընդգրկում է մտքի ազատությունը, ինչպես նաև կրոնի կամ հավատքի առնչությամբ անձնական համոզմունքները և պարտավորությունները, որը դավանվում է ինչպես միանձնյա, այնպես էլ ուրիշների հետ համատեղ: Կոմիտեն մասնակից-պետությունների ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ մտքի և խղճի ազատությունները նույն չափով են պաշտպանվում, ինչպես և կրոնի և համոզմունքների ազատությունը: Այդ ազատությունների հիմնարար բնույթի մասին վկայում է նաև այն փաստը, որ համաձայն Պայմանագրի հողված 4 կետ 2-ի, նույնիսկ արտակարգ

դրության ժամանակ չի թուլատրվում այդ նորմերից որևիցե շեղում:

2. Հոդված 18-ը պաշտպանում է թեխտական, ոչ թեխտական, աթեիստական համոզմունքները, ինչպես նաև, ոչ մի կրոն կամ համոզմունքներ չդավանելու իրավունքը: «Համոզմունքներ» և «կրոն» հասկացություններն անհրաժեշտ է լայնորեն մեկնաբանել: Հոդված 18-ի դրույթների կիրառումը չի սահմանափակվում ավանդական կրոններով կամ այն կրոններով և համոզմունքներով, որոնք ըստ իրենց կազմակերպչական ձևերի կամ պրակտիկայով նման են ավանդական կրոններին: Դրա հետ կապված, Կոմիտեին անհանգստացնում է ցանկացած կրոնների կամ ցանկացած հիմքերի վրա դավանանքների ապակողմնորոշման միտումները, նաև այն պատճառով, որ նրանք համարվում են կրկին ստեղծվածներ կամ դրանք դավանում են կրոնական փոքրամասնությունները, որոնց կարող է թշնամաբար վերաբերվել գերակշիռ կրոնական հանրությունը:

3. Հոդված 18-ում տարբերակում է անցկացվում մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքների ազատության և կրոն կամ համոզմունքներ քարոզելու ազատության միջև: Այս հոդվածը չի ընդունում մտքի և խղճի ազատության որևիցե սահմանափակում կամ էլ սեփական ընտրության կրոնի կամ համոզմունքների ընդունման կամ ունենալու ազատության սահմանափակում: Այդ ազատությունները պաշտպանված են առանց որևիցե սահմանափակումների, ինչպես՝ սեփական կարծիք ունենալը, առանց վնասի յուրաքանչյուրի իրավունքը՝ հոդված 19 կետ 1: Հոդված 18-ի կետ 2-ի և հոդված 17-ի համաձայն, ոչ ոք չի կարող ստիպողաբար բացահայտել սեփական մտքերը կամ այս կամ այն համոզմունքների հանդեպ սեփական հակվածությունները:

4. Կրոն կամ համոզմունքներ դավանելու ազատությունը կարող է իրականացվել ինչպես «միանձնյա, այնպես էլ, ուրիշների հետ համատեղ կարգով»: Կրոնի կամ համոզմունքների դավանելու ազատությունը պաշտամունքի կատարման կրոնական

կամ ծիսական արարողակարգերի և ուսուցման կատարման ժամանակ ընդգրկում է գործողությունների բավականին լայն ոլորտ: Պաշտամունք հասկացությունը ներառում է ծեսեր և արարողակարգեր, որոնցում անմիջականորեն դրսևորում է հավատը, ինչպես նաև դրան ներհատուկ գործողությունները՝ ներառյալ պաշտամունքի իրականացման վայրի կառուցումը, ծիսական ֆորմուլաների և առարկաների օգտագործումը, խորհրդանշանների ցուցադրումը և հանգստի տոների և հանգստյան օրերի պահպանումը: Կրոնի կամ համոզմունքների պահպանումն ու իրականացումը կարող են կայանալ ոչ միայն արարողակարգերի իրականացման մեջ, այլ նաև այնպիսի սովորույթների հետևելու մեջ, ինչպիսիք են սննդակարգում սահմանված սահմանափակումներին հետևելը, առանձնահատուկ տարբերակվող հագուստի կամ գլխաշորի կրելը, ծիսական արարողակարգերին մասնակցությունները, որոնք կապված են կյանքի որոշակի փուլի հետ և հատուկ լեզվի օգտագործումը, որի օգնությամբ, սովորաբար, հաղորդակցվում և շփվում են համապատասխան համայնքին պատկանող մարդիկ: Բացի այդ, այս կամ այն կրոնի կամ համոզմունքների հետ կապված, պրակտիկական և ուսմունքն այնպիսի միջոցառումների իրականացում են ներառում, որոնք անբակտեիորեն կապված են կրոնական խմբերի կողմից սեփական հիմնական գործունեության ծավալման հետ, ինչպես օրինակ, կրոնական ղեկավարների, քահանաների և ուսուցիչների ազատ ընտրությունը, սեմինարների և կրոնական դպրոցների ազատ ստեղծումը և կրոնական տեքստերի և հրապարակումների ազատ կազմումը և տարածումը:

5. Կոմիտեն նշում է, որ կրոնի կամ համոզմունքների «ունենալու կամ ընդունելու» ազատությունն անպայմանորեն ենթադրում է կրոնի կամ համոզմունքների ընտրության ազատություն, ներառյալ սեփական կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատություն, կամ էլ հակված լինել աթեիստական աշխարհայացքի, ինչպես նաև, սեփական կրոնն ու համոզմունքները դավանելու իրավունք: Հոդված 18-ի կետ 2-ում արգելվում է հարկադրանքը, որը նվաստացնում է կրոն կամ համոզմունքներ ունենալու կամ

ընդունելու իրավունքը, ներառյալ ֆիզիկական ուժի կիրառման կամ սպառնալիքի կիրառումը կամ քրեական պատժամիջոցների կիրառումը հավատացյալներին կամ անհավատներին սեփական կրոնական համոզմունքներին կամ աշխարհայացքներին հավատարիմ մնալուն պարտադրելու նպատակով, կամ սեփական կրոնից և համոզմունքներից հրաժարվելու կամ ուրիշով փոխելու նպատակով: Այս նույն նպատակները հետապնդող քաղաքականությունը կամ պրակտիկան, օրինակ՝ կրթության, բուժսպասարկման, աշխատանքի տեղավորման կամ հողված 25-ի կամ Դաշնագրի այլ երաշխավորված դրույթներից օգտվելու սահմանափակումները նույնպես անհամատեղելի են հողված 18-ի կետ 2-ի հետ: Այդպիսի պաշտպանություն երաշխավորված է նրանց, ովքեր հակված են ցանկացած ոչ կրոնական համոզմունքների:

6. Կոմիտեն գտնում է, որ հողված 18-ի կետ 4-ի դրույթները թույլ են տալիս պետական դպրոցներում կրոնի և էթիկայի ընդհանուր պատմության դասընթացների դասավանդում, եթե այդպիսի դասավանդումն անցկացվում է անկողմնակալ և օբյեկտիվ: Ծնողների և օրինական խնամակալների սեփական երեխաների կրոնական և բարոյական դաստիարակության ազատության ապահովումը՝ սեփական համոզմունքներին համապատասխան, որոնց մասին խոսվում է հողված 18 կետ 4-ում, կապված է կրոն կամ համոզմունքներ դասավանդելու ազատության երաշխիքների հետ, որոնց մասին խոսվում է հողված 18-ի կետ 1-ում: Կոմիտեն գտնում է, որ պետական կրթությունը, որն ուսուցման մեջ ներառում է որևիցե կոնկրետ կրոն կամ դավանանք, անհամատեղելի է հողված 18-ի կետ 4-ի հետ, եթե նախատեսված չեն խտրական բնույթի բացառություններ և այլընտրանքային տարբերակներ, որոնք հաշվի են առնում ծնողների կամ խնամակալների դերը:

7. Համաձայն հողված 20-ի, կրոնի կամ համոզմունքների ոչ մի քարոզչություն չպետք է վերածվի պատերազմի քարոզչության կամ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության

օգտին ելույթի, որն իրենից ներկայացնում է խտրականության, թշնամանքի բռնության սադրանք: Ինչպես նշվել է Կոմիտեի կողմից իր №11 (19) ընդհանուր մեկնաբանության մեջ, անդամ-պետությունները պարտավոր են օրենքներ ընդունել, որոնք արգելում են նմանատիպ գործողությունները:

8. Համաձայն հողված 18-ի կետ 3-ի, կրոն կամ համոզմունքներ դավանելու ազատությունը ենթակա է միայն այն սահմանափակումներին, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են հասարակական անվտանգության, կարգի, առողջության և բարոյականության պահպանման, նաև՝ այլ անձանց իրավունքների ու հիմնարար ազատությունների պահպանման համար: Կրոն կամ համոզմունքներ ընդունելու կամ ունենալու հարկադրանքից ազատ լինելը, և ծնողների ու խնամակալների կրոնական և բարոյական կրթության ապահովման ազատությունը սահմանափակումների չեն ենթարկվում: Թույլատրելի սահմանափակումներին վերաբերվող դրույթների գործունեության ոլորտը մեկնաբանելիս, մասնակից-երկրները պետք է ելակետ ընդունեն Դաշնագրում երաշխավորված իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունը՝ ներառյալ 2, 3 և 26 հողվածներում ամրագրված ցանկացած ձևի խտրականությունից ազատության և հավասարության իրավունքը: Սահմանափակումները պետք է հաստատվեն օրենքով և այնպես կիրառվեն, որ չվնասեն հողված 18-ում երաշխավորված իրավունքները: Կոմիտեն նշում է, որ հողված 18-ի կետ 13-ի դրույթները պետք է խստորեն մեկնաբանվեն, ոչ մի հիմնավորում չի ընդունվում սահմանափակումներ հաստատելու համար, բացի նրանցից, որոնք կոնկրետ նախատեսված են, եթե նույնիսկ այդպիսի սահմանափակումները թույլատրվում են Դաշնագրի կողմից պաշտպանված այլ իրավունքների առումով, մասնավորապես ազգային անվտանգությունից ելնելով: Սահմանափակումներ կարող են հաստատվել միայն այն նպատակների համար, որոնց համար դրանք նախատեսված են և պետք է ուղղակիորեն կապված լինեն կոնկրետ նպատակով, որին հասնելը նրանց նպատակն է և պետք է համաչափ լինի: Սահմանափակումները չեն կարող կիրառվել խտրականության

նպատակներով կամ էլ կիրառվել խտրականությամբ: Կոմիտեն նշում է, որ բարոյականության գաղափարը ընկած է շատ հասարակական, փիլիսոփայական և կրոնական տենդենցների հիմքում և հետևաբար, սահմանափակումների հաստատումը կրոնի կամ համոզմունքների դավանման ազատության վրա, բարոյականության պաշտպանության նպատակով, չպետք է հիմնվի սկզբունքների վրա, որոնք բխում են բացառապես միայն մեկ ավանդույթից: Անձինք, որոնց հանդեպ կիրառվում են օրենքով հաստատված որոշ սահմանափակումներ, օրինակ՝ ազատագրվածները, շարունակում են լիարժեքորեն օգտվել կրոնի կամ համոզմունքների դավանելու իրավունքներից: Մասնակից-պետությունների զեկույցներում պետք է պարունակվի տեղեկատվություն, որը վերաբերվում է սահմանափակումների ամբողջ ծավալին և հետևանքներին, որոնք հաստատված են հոդված 18 կետ 3-ին համապատասխան, ինչպես օրենքի, այնպես էլ՝ կոնկրետ դեպքերում դրանց կիրառման տեսանկյունից:

9. Այն փաստը, որ այս կամ այն կրոնն ընդունված է որպես պետական, կամ որ այն հռչակված է որպես պաշտոնական կամ ավանդական, կամ որ դավանողներն ազգաբնակչության մեծամասնությունն են կազմում, չպետք է վնասի ցանկացած իրավունքի իրականացմանը, որոնք ամրագրված են Դաշնագրում, ներառյալ 18 և 27 հոդվածները, չպետք է հանգեցնի խտրականության այլ կրոններ դավանողների, կամ էլ ոչ մի կրոն չդավանողների հանդեպ: Մասնավորապես, որոշ միջոցներ, որոնք խտրական են համարվում վերջիններիս հանդեպ, ինչպես որոշ շրջանակների անձանց սահմանափակումները, որոնք պետական ծառայողներ են, գերակա կրոնի դավանողներ են կամ նրանց տնտեսական արտոնությունների տրամադրումը, կամ այլ համոզմունքներ դավանելու հատուկ սահմանափակումների հաստատումը, հակասում են դրույթներին, որոնք արգելում են խտրականությունը կրոնի կամ համոզմունքների հիման վրա և հավասար պաշտպանության երաշխիքները, որոնք նախատեսված են հոդված 26-ում: Կրոնական փոքրամասնությունների և այլ կրոնական խմբերի ազատությունների խախտման կարևոր երաշխիքներ, որոնք

նախատեսված են հոդված 18 և 27-ով, ինչպես նաև այդ խմբերի հանդեպ բռնի գործողությունների և հետապնդումների երաշխիք են համարվում այն միջոցները, որոնց մասին խոսվում է Դաշնագրի հոդված 20-ի կետ 2-ում: Կոմիտեն ցանկանում է ինֆորմացիա ստանալ միջոցների մասին, որոնք ընդունված են համապատասխան մասնակից-պետությունների կողմից, ազատությունների սահմանափակման բոլոր կրոնների և համոզմունքների պաշտպանության նպատակներով, իսկ հետևորդներից՝ խտրականության վերաբերյալ: Կոմիտեին նաև տեղեկություն է անհրաժեշտ կրոնական փոքրամասնությունների իրավունքների մասին՝ համաձայն հոդված 27-ի, որպեսզի վերջինս կարողանա գնահատել մտքի, խղճի, կրոնի և համոզմունքների ազատությունների պահպանման աստիճանը մասնակից պետությունների կողմից: Չամապատասխան մասնակից-երկրները պետք է սեփական զեկույցներում ինֆորմացիա ներառեն, որը վերաբերում է իրենց օրենսդրության և դատական պրակտիկայի շրջանակներում որպես աստվածամարգություն որակավորվող գործողությունների և այդ պատճառով էլ պատժի են ենթական:

10. Եթե կանոնադրություններում, դրույթներում, իշխող կուսակցությունների հայտարարություններում (և այլն) կամ իրական կյանքում համոզմունքների այս կամ այն խումբը դիտարկվում է որպես պաշտոնական գաղափարախոսություն, դա չպետք է որևիցե վնաս հասցնի հոդված 18-ի հռչակված ազատություններին, կամ Դաշնագրում ընդունված այլ իրավունքներին, ոչ էլ առանձին անձանց հանդեպ խտրականության, ովքեր չեն ընդունում պաշտոնական գաղափարախոսությունը կամ էլ դեմ են հանդես գալիս:

11. Շատ անձինք հայտարարում են զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի մասին (խղճի ազատություն) այն հիման վրա, որ այդ իրավունքի աղբյուր են համարում հոդված 18-ում երաշխավորված ազատությունները: Այդ հրաժարվելու հետ կապված, աճում է պետությունների թիվը, որոնք ըստ օրենքի ազատում են զինվորական ծառայությունից անձանց,

որոնք իսկապես դավանում են կրոնական կամ այլ համոզմունքներ, որոնք նրանց արգելում են զինվորական ծառայություն կրելը և փոխարինում են այդ ծառայությունն այլընտրանքային ազգային ծառայությունով: Դաշնագրում կոնկրետ չի խոսվում խղճի ազատությունից ելնելով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի մասին, սակայն Կոմիտեն գտնում է, որ այդպիսի իրավունքը բխում է հոդված 18-ից, քանի որ զենք կրելու առումով պարտականությունները կարող են լուրջ հակասության մեջ մտնել կրոնի կամ համոզմունքների արտահայտման իրավունքի և խղճի ազատության հետ: Այն դեպքերում, երբ այդպիսի իրավունքն ընդունված է օրենքով կամ պրակտիկայով, չպետք է տարբերություն դրվի զինվորական ծառայությունից հրաժարվող անձանց միջև՝ խղճի նկատառումով, նրանց կոնկրետ համոզմունքների բնույթի հիման վրա, ինչպես և չպետք է խտրականություն լինի այդպիսի անձանց հանդեպ զինվորական ծառայություն կրելուց խուսափելու պատճառով: Կոմիտեն առաջարկում է մասնակից-երկրներին տեղեկություն տրամադրել զինվորական անձանց ծառայությունից ազատելու պայմանների մասին՝ հոդված 18-ում ամրագրված նրանց իրավունքների հիման վրա և այլընտրանքային ազգային ծառայության բնույթի և տևողության վերաբերյալ:

Տարածաշրջանային գործիքներ

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն

Եվրոպայում անվտանգության և համագործակցության վերաբերյալ կոնֆերանսի Եզրափակիչ ակտ (Հելսինկի 1975 թ.)

Չարցեր, որոնք վերաբերում են Եվրոպայի անվտանգությանը:

Գլուխ 1. ա) Մասնակից պետությունների միջև հարաբերությունները կարգավորող սկզբունքների հռչակագիր

Սկզբունք VII. Չարգանք մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ, ներառյալ խղճի, մտքի, կրոնի կամ համոզմունքների ազատությունը:

1. Մասնակից Պետությունները պետք է հարգեն մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները՝ ներառյալ մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքի ազատությունը՝ անկախ ռասայական, սեռական, լեզվական կամ կրոնական հատկանիշներից:

...

Այս շրջանակներում Մասնակից Պետությունները պետք է հարգանքով վերաբերեն անձի ազատությանը, միայնակ կամ այլոց հետ համատեղ, դավանելու և հետևելու այն կրոնին կամ համոզմունքներին, որոնք թելադրված են սեփական խղճով:

Համագործակցություն մարդասիրական և այլ ոլորտներում

Գլուխ 1. Մարդկային շփումներ

Մասնակից պետությունները, ցանկանալով նպաստել ազգերի միջև խաղաղության և փո-

խընթեցնման ուժեղացմանը, ինպես նաև մարդկային անձնի հոգևոր հարստացմանը՝ անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ կրոնից,

գիտակցելով, որ աճող մշակութային ու կրթական փոխանակումները, տեղեկատվության լայն տարածումը, մարդկանց միջև շփումները և մարդասիրական խնդիրների լուծումը կնպաստի այդ նպատակներին հասնելուն,

ցանկանալով համագործակցել միմյանց հետ անկախ քաղաքական, տնտեսական կամ սոցիալական համակարգերից, որպեսզի առավել բարենպաստ պայմաններ ստեղծվեն վերը նշված ոլորտներում, ինպես նաև խորացնել ու ուժեղացնել համագործակցության ներկա ձևերը և նոր ուղիներ ու միջոցներ մշակել այդ նպատակներին հասնելու համար,

համոզված լինելով, որ այս համագործակցությունը պետք է տեղի ունենա մասնակից պետությունների միջև հարաբերությունները կարգավորող սկզբունքներին լրիվ համապատասխան, ինչպես նշված է համապատասխան փաստաթղթում,

Ընդունեցին հետևյալը.

...

դ) Գործուղումներ անձնական կամ մասնագիտական պատճառներով

Նրանք հաստատում են, որ կրոնական հավատքը, հաստատությունները և կազմակերպությունները գործում են մասնակից պետությունների սահմանադրությունների շրջանակներում և նրանց ներկայացուցիչները կարող են իրենց գործունեության ոլորտում իրականացնել միմյանց միջև շփումներ, խորհրդակցություններ և տեղեկատվության փոխանակում:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կոնֆերանսի մասնակից պետությունների ներկայացուցիչների Վիեննայի հանդիպման եզրափակիչ փաստաթուղթ (1989)

Սկզբունք (11) Եվրոպայում անվտանգությանը վերաբերող հարցեր

[Մասնակից պետությունները] հաստատում են, որ պետք է հարգեն մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, այդ թվում բոլոր մարդկանց՝ մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքի, անկախ ռասայից, սեռից, լեզվից կամ կրոնական պատկանելությունից: Նրանք նաև հաստատում են մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների համընդհանուր նշանակությունը, հարգանքը, որը կարևոր գործոն է խաղաղության, արդարության և անվտանգության ապահովման նրանց միջև բարեկամական կապերի և համագործակցության զարգացման համար, ինչպես և մյուս պետությունների միջև:

Սկզբունք (13) Եվրոպայում անվտանգությանը վերաբերող հարցեր

(13.7) [Մասնակից պետությունները] երաշխավորում են յուրաքանչյուրի մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները իրենց տարածքում և իրենց իրավասությունների ներքո՝ առանց որևէ տարբերության, ինչպիսիք են սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ համոզմունքները, ազգային կամ սոցիալական ծագումը, ունեցվածքը, դասային պատկանելությունը, ծնունդը կամ այլ կարգավիճակը:

Սկզբունք (16) Եվրոպայում անվտանգությանը վերաբերող հարցեր

Կրոն կամ համոզմունքներ դավանելու և հետևելու անհատի ազատությունը երաշխավորելու համար մասնակից պետությունները, ի թիվս այլ բաների, պետք է.

(16.1)-ծեռնարկեն արդյունավետ միջոցներ կանխելու և վերացնելու խտրականությունը կրոնի կամ համոզմունքի հիման վրա անհատների կամ համայնքների նկատմամբ՝ ճանաչելով, իրագործելով և իրականացնելով մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, մշակութային և սոցիալական կյանքի բոլոր բնագավառներում, ինչպես նաև երաշխավորելով հավատացյալների և ոչ հավատացյալների միջև արդյունավետ հավասարությունը;

(16.2)-ապահովեն փոխադարձ հարգանքի և հանդուրժողականության մթնոլորտ տարբեր համայնքների հավատացյալների միջև, ինչպես նաև հավատացյալների և ոչ հավատացյալների միջև;

(16.3)-իրենց պետությունների սահմանադրական իրավասությունների շրջանակում կրոնական հավատքը դավանող կամ դավանելու պատրաստվող հավատացյալների համայնքներին, իրենց իսկ խնդրանքով, ճանաչեն նրանց իրավական կարգավիճակը, որը նախատեսված է նրանց համար իրենց երկրներում;

(16.4)-հարգեն կրոնական համայնքների իրավունքը՝

- ստեղծելու և օգտագործելու հեշտությամբ հասանելի պաշտամունքային վայրեր կամ հավաքատեղիներ;
- ինքնակազմակերպվելու իրենց սեփական հիերարխիկ և ինստիտուցիոնալ կառուցվածքին համապատասխան;
- իրենց չափանիշներին և պահանջներին համապատասխան ընտրելու, նշանակելու և փոխարինելու իրենց անձնակազմը, ինչպես նաև ձեռք բերելու ցանկացած ազատ պայմանավորվածություններ պետության և իրենց միջև;
- պահանջելու և ստանալու կամավոր ֆինանսական և այլ աջակցություն:

(16.5)-խորհրդակցեն կրոնական հավատքների, հաստատությունների կամ կազմակերպությունների հետ, որպեսզի առավել խոր պատկերացումներ ունենան կրոնական ազատության պահանջների վերաբերյալ;

(16.6)-հարգեն իրենց ընտրությամբ կրոնական կրթություն տալու կամ ստանալու յուրաքանչյուր մարդու իրավունքը՝ անհատապես կամ մյուսների հետ համատեղ;

(16.7)-այս համատեքստում, ի թիվս այլ բաների, հարգեն ծնողների ազատությունը՝ երաշխավորելով իրենց սեփական համոզմունքներին համապատասխան իրենց երեխաների կրոնական և բարոյական կրթությունը;

(16.8)-թույլատրեն կրոնական անձնակազմի վերապատրաստումը համապատասխան հաստատություններում;

(16.9)-հարգեն անհատ հավատացյալների և կրոնական խմբերի՝ իրենց նախընտրած լեզվով սուրբ գրքեր, կրոնական հրատարակություններ, ինչպես նաև կրոնական կամ դավանական գործունեությանը վերաբերող այլ հոդվածներ և նյութեր ձեռք բերելու, տնօրինելու և օգտագործելու իրավունքը;

(16.10)-թույլատրեն կրոնական խմբերին, հաստատություններին և կազմակերպություններին թողարկել, ներմուծել և տարածել կրոնական հրատարակություններ և նյութեր;

(16.11)-բարենպաստ են համարում կրոնական համայնքների հետաքրքրվածությունը մասնակցելու հանրային երկխոսությանը, այդ թվում՝ ՉԼՄ-ների միջոցով:

Սկզբունք (17) Եվրոպայում անվտանգությանը վերաբերող հարցեր

Մասնակից պետությունները ընդունում են, որ կրոնի կամ համոզմունքների ազատությանն վերաբերվող վերը նշված իրավունքների իրագործումը կարող է ենթարկվել միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և համապատասխանում են միջազգային օրենքներով ստանձնած պարտականություններին և միջազգային պարտավորություններին:

Նրանք երաշխավորում են իրենց օրենքներում ու կանոնակարգերում, ինչպես նաև դրանց կիրառման ժամանակ մտքի, խղճի, կրոնի կամ համոզմունքի ազատության ամբողջական և արդյունավետ իրագործումը:

Սկզբունք (19) Եվրոպայում անվտանգությանը վերաբերող հարցեր

(19) [Մասնակից պետությունները] պետք է պաշտպանեն և ստեղծեն պայմաններ իրենց տարածքում ազգային փոքրամասնությունների էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնության խթանման համար: Նրանք պետք է հարգեն նման փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ազատ իրագործումը ու ապահովեն այլոց հետ նրանց լիակատար հավասարությունը:

Սկզբունք (21) Եվրոպայում անվտանգությանը վերաբերող հարցեր

(21) Մասնակից պետությունները պետք է երաշխավորեն, որ վերը նշված իրավունքների իրագործումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացառությամբ նրանց, որոնք նախատեսված են օրենքով և համապատասխանում են միջազգային օրենքների համաձայն նրանց ստանձնած պարտավորություններին, մասնավորապես՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին, ինչպես նաև իրենց միջազգային պարտավորություններին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների հանընդհանուր հռչակագրին: Այդ սահմանափակումներն ունեն բացառիկ բնույթ: Մասնակից պետությունները պետք է երաշխավորեն, որ այս սահմանափակումները չչարաշահվեն և դրանք չկիրառվեն կամայականորեն, այլ այնպես, որ ապահովվեն այդ իրավունքների արդյունավետ իրականացումը:

Համագործակցություն մարդասիրական և այլ ոլորտներում

Պարագրաֆ 32 Մարդկային շփումներ

[Մասնակից պետությունները] պետք է թույլատրեն հավատացյալներին, կրոնական համայնքներին և իրենց ներկայացուցիչներին խմբային կամ անհատական հիմունքներով հաստատել և պահպանել անմիջական անհատական շփումները և հաղորդակցությունները միմյանց միջև իրենց և այլ երկրներում, ի թիվս այլ բաների՝ ճամփորդությունների, ուխտագնացությունների, հավաքներին մասնակցության և այլ կրոնական միջոցառումների միջոցով: Այս համատեքստում այնքանով, որքանով սա բնորոշ է նման շփումներին և իրադարձություններին, նրանց թույլ կտրվի ձեռք բերել, ստանալ, իրականացնել կրոնական հրատարակություններ և կրոնական նյութեր՝ կապված իրանց կրոնի կամ համոզմունքի իրականացման հետ:

Համագործակցություն մարդասիրական և այլ ոլորտներում

Պարագրաֆ 68 Կրթության բնագավառում համագործակցություն և փոխանակումներ

[Մասնակից պետությունները] պետք է երաշխավորեն, որ ազգային փոքրամասնություններին կամ իրենց տարածքի տարածաշրջանային մշակույթներին պատկանող անձիք կարողանան տալ կամ ստանալ գիտելիքներ իրենց սեփական մշակույթի մասին, այդ թվում՝ ծնողներից երեխաներին փոխանցել իրենց լեզվական, կրոնական, մշակութային ինքնությունը:

ԵԱՀԽ մարդկային չափանիշի մասնակից պետությունների ներկայացուցիչների խորհրդաժողովի Կոպենհագենի խորհրդակցության փաստաթուղթը (1990թ.)

Սկզբունք 9

Մասնակից պետությունները հաստատում են, որ

(9.4)-յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և համոզմունքի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու և ինչպես անհատապես, այնպես էլ ուրիշների հետ հանրային կամ մասնավոր ձևով այն դավանելու ազատություն՝ պաշտամունք մատուցելու, սովորեցնելու և կրոնական և ծիսական արարողակարգեր կատարելու միջոցով: Այդ իրավունքների իրականացումը ենթակա են միայն այնպիսի սահմանափակումների, որոնք նախատեսված են օրենքով և համապատասխանում են միջազգային չափանիշներին,

Սկզբունք 18

Մասնակից պետությունները

(18.1)-նշում են, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնաժողովը ճանաչել է համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից հրաժարվելու յուրաքանչյուր անձի իրավունքը,

(18.2)-նշում են որոշ մասնակից պետությունների կողմից վերջերս ձեռնարկված միջոցառումները, որպեսզի թույլ տան համոզմունքների պատճառով ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից,

(18.3)-նշում են որոշ հասարակական կազմակերպությունների գործունեությունը՝ կապված համոզմունքների պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվելու հետ,

(18.4)-համաձայն են քննարկել այլընտրանքային ծառայության տարբեր ձևերի ներմուծումը, եթե այն դեռ տեղի չի ունեցել, որոնք համատեղելի են համոզմունքների պատճառով պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվելու պատճառների հետ և այլընտրանքային ծառայության նման ձևերը սկզբունքորեն չպետք է կապված լինեն մարտական ծառայության հետ կամ պետք է կրեն քաղաքացիական բնույթ, պետք է լինեն հասարակությանը օգտակար և չպետք է կրեն որևէ պատժիչ բնույթ,

(18.5)-հասարակությանը մատչելի դարձնեն այս հարցին վերաբերվող տեղեկատվությունը,

(18.6)- մարդկային չափանիշին վերաբերվող կոնֆերանսի շրջանակներում կքննարկեն անհատների պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու հետ կապված համապատասխան հարցերը, որտեղ դրանք կան՝ հիմք ընդունելով համոզմունքների հիման վրա զինված ուժերում ծառայուց հրաժարումը և կփոխանակեն այս հարցերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Սկզբունք 24

Մասնակից պետությունները պետք է երաշխավորեն վերոնշյալ մարդու բոլոր իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումը, որոնք ենթակա չեն որևէ սահմանափակման, բացառությամբ նրանց, որոնք նախատեսված են օրենքով և համապատասխանում են միջազգային օրենքների համաձայն նրանց ստանձնած պարտավորություններին, մասնավորապես՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրին, ինչպես նաև իրենց միջազգային պարտավորություններին, մասնավորապես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրին: Այդ սահմանափակումներն ունեն բացառիկ բնույթ: Մասնակից պետությունները պետք է երաշխավորեն, որ այս սահմանափակումները չչարաշահվեն և դրանք չկիրառվեն կամայականորեն, այլ այնպես, որ ապահովվեն այդ իրավունքների արդյունավետ իրականացումը:

Ժողովրդավարական հասարակության մեջ իրավունքների և ազատությունների ցանկացած սահմանափակում պետք է վերաբերի կիրառելի օրենքի նպատակներից մեկին և պետք է խստորեն համապատասխանի այդ օրենքի նպատակին:

Սկզբունք 25

Մասնակից պետությունները հաստատում են, որ մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հետ կապված

պարտավորություններից ցանկացած նահանջ, արտակարգ իրավիճակների պայմաններում, պետք է խստորեն մնա միջազգային օրենսդրության սահմաններում, մասնավորապես, համապատասխան միջազգային փաստաթղթերի շրջանակներում, որոնցով նրանք ստանձնել են պարտավորություններ և հատկապես այն իրավունքների կապակցությամբ, որոնցից չի կարող լինել հետնահանջ: Նրանք վերահաստատում են, որ

(25.1) - այդ պարտավորություններից հրաժարման միջոցառումները պետք է խիստ համապատասխան լինեն նշված փաստաթղթերի ընթացակարգային պահանջներին;

(25.2) - արտակարգ իրավիճակ սահմանելը պետք է հայտարարվի պաշտոնապես, հրապարակայնորեն և համապատասխանի օրենքով սահմանված դրույթներին:

(25.3) - պարտավորություններից հրաժարման միջոցառումները պետք է սահմանափակվեն այնքանով, որքանով խստորեն պահանջում է իրավիճակի սրությունը:

(25.4) - այսպիսի միջոցառումները չեն հանգեցնի խտրականության միայն ռասայական պատկանելության, մաշկի գույնի, սեռի, լեզվի, համոզմունքի, սոցիալական ծագման կամ փոքրամասնության պատկանելիության հիման վրա:

Սկզբունք 30

Մասնակից պետությունները ընդունում են, որ ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերը կարող են բավարարելու համար լուծվել միայն օրենքի գերիշխանության վրա հիմնված ժողովրդավարական քաղաքական համակարգի շրջանակներում, որտեղ գործում է անկախ դատական իշխանություն: Այս համակարգը երաշխավորում է լիարժեք հարգանք մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ, հավասար իրավունքներ և կարգավիճակ բոլոր քաղաքացիներին,

նրանց օրինական շահերի և ձգտումների ազատ արտահայտում, քաղաքական բազմակարծություն, սոցիալական հանդուրժողականություն և պետական իշխանության չարաշահումը արդյունավետորեն զսպող իրավական կանոնների իրագործում:

Նրանք նաև ճանաչում են հասարակական կազմակերպությունների, ներառյալ քաղաքական կուսակցությունների, արհմիությունների, մարդու իրավունքների հարցերով զբաղվող կազմակերպությունների և կրոնական խմբերի կարևոր դերը հանդուրժողականության խթանման, մշակութային բազմազանության և ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերի լուծման գործում:

Նրանք նաև հաստատում են, որ ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների նկատմամբ հարգանքը, իբրև համընդհանուր ձևով ճանաչված մարդու իրավունքների մաս, էական գործոն է մասնակից պետություններում խաղաղության, արդարության, կայունության և ժողովրդավարության համար:

Սկզբունք 32

Ազգային փոքրամասնության պատկանելի անձի անհատական ընտրությունն է և որևէ բացասական հետևանք չպետք է լինի նման ընտրության պատճառով:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք իրավունք ունեն ազատորեն արտահայտել, պահպանել և զարգացնել իրենց էթնիկ, մշակութային, լեզվական կամ կրոնական ինքնությունը և պահպանել ու զարգացնել իրենց մշակույթն իր բոլոր կողմերով՝ չենթարկվելով իրենց կամքին հակառակ որևէ ասիմիլացման փորձի: Մասնավորապես նրանք իրավունք ունեն.

...

(32.2) - հիմնել և պահպանել իրենց սեփական կրթական, մշակութային և կրոնական հաստատությունները, կազմակերպու-

թյունները կամ միավորումները, որոնք կարող են ստանալ կամավոր ֆինանսավորում և այլ աջակցություններ, ինչպես նաև՝ հանրային աջակցություն ներպետական օրենսդրությամբ համապատասխան;

(32.3) - դավանել և հետևել իրենց կրոնին, այդ թվում ձեռք բերել, տիրապետել և օգտագործել կրոնական նյութեր և իրականացնել կրոնական-կրթական գործունեություն իրենց մայրենի լեզվով;

(32.4) - առանց որևէ խոչընդոտի հաստատել և պահպանել շփումներ միմյանց միջև իրենց երկրի ներսում, ինչպես նաև՝ այլ երկրների քաղաքացիների հետ երկրի սահմաններից դուրս, որոնց հետ նրանք ունեն ընդհանուր էթնիկ կամ ազգային ծագում, մշակութային ժառանգություն կամ կրոնական համոզմունքներ:

...

(32.6) - հաստատել և պահպանել կազմակերպություններ կամ միավորումներ իրենց երկրի ներսում և անդամակցել միջազգային հասարակական կազմակերպությունների:

Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք կարող են իրագործել և օգտագործել իրենց իրավունքները ինչպես անհատապես, այնպես էլ խմբի այլ անդամների հետ համատեղ: Ազգային փոքրամասնությանը պատկանող անձի համար չի կարող առաջանալ որևէ բացասական հետևանք՝ նման իրավունքների իրագործման կամ չիրագործման հիման վրա:

Սկզբունք 33

Մասնակից պետությունները պետք է պաշտպանեն ազգային փոքրամասնությունների էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնությունը իրենց տարածքներում և պայմաններ ստեղծեն այդ ինքնության խթանման համար: Համապատասխան

խորհրդակցություններ անցկացնելուց հետո նրանք պետք է այդ նպատակի համար ձեռնարկեն անհրաժեշտ միջոցառումներ, այդ թվում այդ փոքրամասնությունների կազմակերպությունների կամ միավորումների հետ շփումները՝ յուրաքանչյուր պետություն գործող որոշումների կայացման ընթացակարգերին համապատասխան:

Նման ցանկացած միջոցառում պետք է համահունչ լինի նշված մասնակից պետության այլ քաղաքացիների նկատմամբ հավասարության և հակախտրականության սկզբունքներին:

Սկզբունք 35

Մասնակից պետությունները պետք է հարգեն ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքները հանրային գործերում արդյունավետ մասնակցության համար, այդ թվում՝ այդպիսի փոքրամասնությունների ինքնության պաշտպանությանը և խրախուսմանը վերաբերվող գործերին:

Մասնակից պետությունները ջանքեր են գործադրում կոնկրետ ազգային փոքրամասնությունների էթնիկ, մշակութային, լեզվական և կրոնական ինքնության խթանման նպատակով և այդ նպատակին հասնելու համար իբրև հնարավոր միջոցներից մեկը ստեղծում են համապատասխան տեղական կամ ինքնավար վարչական մարմիններ՝ հաշվի առնելով այդ փոքրամասնությունների պատմական և տարածքային հանգամանքերը և այդ պետության կողմից վարվող քաղաքականությունը:

Սկզբունք 36

Մասնակից պետությունները հասկանում են ազգային փոքրամասնություններին վերաբերող հարցերում միմյանց միջև կառուցողական համագործակցության զարգացման առանձնակի կարևորությունը: Նման համագործակցությունը նպատակ է հետապնդում խթանել փոխըմբռնումը և վստահությունը, բարեկա-

մական և բարեացական հարաբերությունները, միջազգային խաղաղությունը, անվտանգությունը և արդարությունը:

Մասնակից պետություններից յուրաքանչյուրը պետք է նպաստի իր տարածքում ապրող բոլոր անձանց միջև փոխադարձ հարգանքի, փոխըմբռնման, համագործակցության և համերաշխության մթնոլորտի ստեղծմանը, առանց էթնիկական կամ ազգային ծագման կամ կրոնական պատկանելիության և պետք է նպաստի երկխոսության միջոցով խնդիրների լուծմանը՝ հիմնված օրենքների գերակայության սկզբունքների վրա:

Սկզբունք 40

Մասնակից պետությունները հստակորեն և միանշանակ դատապարտում են ամբողջատիրությունը (տոտալիտարիզմ), ռասսայական և էթնիկական ատելությունը, հակասեմիտականությունը, որևէ մեկի դեմ քսենոֆոբիան և խտրականությունը, ինչպես նաև կրոնական և գաղափարական հիման վրա հետապնդումները: Այս համատեքստում նրանք նաև գիտակցում են գնչուների (ռոմա) հետ կապված յուրահատուկ խնդիրները:

Նրանք հայտարարում են իրենց հստակ մտադրությունը ուժեղացնելու իրենց ջանքերը նման երևույթների դեմ, իրենց բոլոր դրսևորումներով, պայքարելու համար և, ուստի, պետք է

(40.1) - ձեռնարկեն արդյունավետ միջոցներ, այդ թվում, համաձայն իրենց սահմանադրական համակարգերի և միջազգային պարտավորությունների, ընդունեն այնպիսի օրենքներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել ցանկացած գործողություններից պաշտպանվելու համար, որոնք հրահրում են բռնություն անձանց կամ խմբերի դեմ ազգային, ռասսայական, էթնիկական կամ կրոնական խտրականության, թշնամության կամ ատելության, այդ թվում հակասեմիտականության հիման վրա:

(40.2)- ստանձնեն պատասխանատվություն ձեռնարկելու համապատասխան և համաչափ միջոցներ մարդկանց կամ խմ-

բերին պաշտպանելու համար, որոնք կարող են ենթարկվել սպառնալիքների կամ խտրականության, թշնամանքի կամ բռնության ակտերի իրենց ռասսայական, էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական ինքնության և սեփականության պահպանման արդյունքում:

(40.3) - ձեռնարկեն արդյունավետ միջոցներ համաձայն իրենց սահմանադրական համակարգերի, ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում փոխըմբռնման և հանդուրժողականության խթանման համար, հատկապես կրթության, մշակույթի և տեղեկատվության ոլորտներում;

(40.4) - ձգտեն ապահովել, որ կրթության նպատակները ենթադրում են հատուկ ուշադրություն ռասսայական նախապաշարմունքների և ատելության վրա և ամրապնդում են տարբեր քաղաքակրթությունների և մշակույթների նկատմամբ հարգանք:

(40.5) - ներպետական օրենսդրության համաձայն ճանաչեն անհատի իրավունքը իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներով, ինչպես նաև խրախուսեն շահագրգիռ անձանց և խմբերի իրավունքները նախաձեռնելու և աջակցելու խտրական ակտերի, ներառյալ ռասիզմի և քսենոֆոբիայի դեմ բողոքների:

(40.6)- քննարկեն խտրականության հարցերին վերաբերող միջազգային փաստաթղթերին միանալու հարցը, եթե դեռ չեն միացել և երաշխավորեն այդ փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների լիարժեք համապատասխանությունը, այդ թվում պարբերական զեկույցների ներկայացմանը վերաբերող պարտավորությունները:

(40.7) - քննարկեն նաև այն միջազգային մեխանիզմների ընդունման հարցը, որոնք պետություններին և անհատներին միջազգային մարմիններին ներկայացնել խտրականության վերաբերյալ հաղորդագրություններ:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին [եվրոպական] կոնվենցիա:

Հոդված 9. Մտքի, խղճի և կրոնի ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունք. այս իրավունքը ներառում է իր կրոնը կամ համոզմունքը փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, քարոզչության, արարողությունների, պաշտամունքի և ծեսերի միջոցով արտահայտելու ազատություն:

2. Սեփական կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն այնպիսի սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի պաշտպանություն հասարակական անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների:

Հոդված 10. Արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի ազատորեն արտահայտվելու իրավունք: Այս իրավունքը ներառում է սեփական կարծիք ունենալու, տեղեկություններ և գաղափարներ ստանալու և տարածելու ազատությունը՝ առանց պետական մարմինների միջամտության և անկախ սահմաններից: Այս հոդվածը չի խոչընդոտում պետություններին՝ սահմանելու ռադիոհաղորդումների, հեռուստատեսային կամ կինեմատոգրաֆիական ձեռնարկությունների լիցենզավորում:

2. Այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդա-

վարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:

Հոդված 11. Հավաքների և միավորման ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ հավաքների ազատության և այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

2. Այս իրավունքների իրականացումը ենթակա չէ որևէ սահմանափակման, բացի նրանցից, որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը կամ այլ անձանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով: Սույն հոդվածը չի խոչընդոտում օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության և պետական վարչակազմի մեջ մտնող անձանց կողմից այդ իրավունքների իրականացման նկատմամբ:

Հոդված 14. Խտրականության արգելում

Սույն Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելը ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից:

Եվրոպական կոնվենցիայի առաջին արձանագրություն (1952թ.)

Հոդված 2. Կրթության իրավունք

Ոչ մեկին չի կարելի մերժել կրթության իրավունքը: Պետությունը կրթության և ուսուցման բնագավառում իր ստանձնած ցանկացած գործառույթ իրականացնելիս հարգում է ծնողների՝ զավակների համար իրենց կրոնական ու փիլիսոփայական համոզմունքներին համապատասխան կրթություն և ուսուցում ապահովելու իրավունքը:

Մարդու իրավունքների մասին ամերիկյան կոնվենցիա, O.A.S. պայմանագրերի շարք No. 36, 1144 U.N.T.S. 123, ուժի մեջ է մտել 1978թ. հուլիսի 18-ին

Հոդված 12. Խղճի և կրոնի ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի խղճի և կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է իր կրոնը և համոզմունքները պահպանելու և փոխելու ազատությունը և դրանք ինչպես միանձնյա, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով, դավանելու կամ տարածելու ազատություն:

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի սահմանափակումների, որոնք կարող են խախտել նրա ազատությունը պատկանելու կամ փոխելու իր կրոնը կամ համոզմունքերը:

3. Կրոնը կամ համոզմունքները դավանելու ազատությունը ենթակա է միայն օրենքով նախատեսված սահմանափակումների, որոնք անհրաժեշտ են հանրային անվտանգության, հասարակական կարգի, առողջության կամ բարոյականության պաշտպանության համար, ինչպես նաև այլ անձանց իրավունքների կամ ազատությունների պաշտպանության համար:

4. Ծնողները և որոշ դեպքերում խնամակալներն իրավունք ունեն ապահովելու իրենց երեխաների կրոնական և բարոյական

դաստիարակությունը կամ համապատասխանեցնելու իրենց համոզմունքներին:

Հոդված 13. Մտքի և արտահայտվելու ազատություն

1. Յուրաքանչյուր ոք ունի մտքի և արտահայտվելու ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է ամեն տեսակի տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն, անկախ սահմաններից, բանավոր, գրավոր կամ տպագիր միջոցներով՝ արվեստի կամ իրենց ընտրած այլ միջոցներով:

2. Նախորդ կետում նախատեսված իրավունքի իրագործումը ենթակա չէ նախնական գրաքննության, սակայն ենթադրում է օրենքով հստակորեն նախատեսված հետագա պատասխանատվություն այնքանով, որքանով որ անհրաժեշտ է երաշխավորել ա/ հարգանքն այլ անձանց իրավունքների կամ հեղինակության նկատմամբ, կամ բ/ ազգային անվտանգության, հասարակական կարգի, կամ հանրային առողջության կամ բարոյականության պաշտպանությունը:

3. Արտահայտվելու ազատության իրավունքը չի կարող սահմանափակել անուղղակի մեթոդներով և միջոցներով, ինչպիսիք են լրատվամիջոցների, ռադիո հեռահաղորդակցության հաճախականությունների կամ տեղեկատվության տարածման համար օգտագործվող սարքավորումների նկատմամբ կառավարության կողմից իրականացվող չարաշահումները կամ մասնավոր վերահսկողությունը կամ այլ ցանկացած միջոցներով, որոնք նպատակ ունեն խոչընդոտել գաղափարների և կարծիքների տարածումը և շրջանառությունը:

4. Անկախ վերոնշյալ 2-րդ կետի դրույթներից, հանրային ժամանցային միջոցառումները կարող են ենթակա լինել օրենքով սահմանված նախնական գրաքննության՝ միակ նպատակ ու-

նենալով կարգավորել դրանց հասանելիությունը երեխաների և դեռահասաների բարոյական պաշտպանության տեսանկյունից:

5. Ցանկացած քարոզչական պատերազմ և ցանկացած ազգային, ռասայական կամ կրոնական ատելության քարոզ, որը իրենից ներկայացնում է անօրինական բռնության հրահրում կամ որևէ այլ նմանատիպ գործողություն ցանկացած անձի կամ անձանց խմբի նկատմամբ ցանկացած հիմքով, ներառյալ ռասայի, մաշկի գույնի, կրոնի, լեզվի կամ ազգային ծագման հողի վրա, համարվում է օրենքով պատժվող հանցագործություն:

Հավելված II:

Գրականության ցանկ

Alfredsson, Gudmundur and Asbjorn Eide, eds. *The Universal Declaration of Human Rights: A Common Standard of Achievement*. The Hague: Martinus Nijhoff Publishers, 1999.

Boyle, Kevin and Juliet Sheen, eds. *Freedom of Religion and Belief: A World Report*. London: Routledge, 1997.

Caparros, Ernest and Louis-Léon Christians, eds. *La religion en droit comparé a l'aube du 21e siècle*. Bruxelles: 2000.

Davis, Derek. "The Evolution of Religious Freedom as a Universal Human Right: Examining the Role of the 1981 United Nations Declaration on the Elimination of all Forms of Intolerance and of Discrimination Based on Religion or Belief." *BYU Law Review* (2002): 217, 230.

Durham, Cole. *Freedom of Religion or Belief: Laws Affecting the Structuring of Religious Communities*. Warsaw, Poland: OSCE/ODIHR, 1999.

Evans, Carolyn. *Freedom of Religion under the European Convention on Human Rights*. Oxford: Oxford University Press, 2001.

Evans, Malcolm D. *Religious Liberty and International Law in Europe*. Cambridge: Cambridge University Press, 1997.

Ferrari, Silvio and W. Cole Durham, Jr., eds. *State and Church in Post-Communist Europe*. Leuven: Peeters, 2003.

Gonzalez, Gérard. *La convention européenne des droits de l'homme et la liberté des religions*. Paris: Economica, 1997.

Ghanea, Nazila, ed. *The Challenge of Religious Discrimination at the Dawn of the New Millennium*. Leiden: Martinus Nijhoff Publishers, 2003.

Grotens, Chantal and Bahia Tahzib-Lie, eds. *Seminar on Freedom of Religion or Belief in the OSCE Region: Challenges to Law and Practice*. The Hague: Ministerie van Buitenlandse Zaken, 26 June 2001.

Gunn, T. Jeremy. "The Complexity of Religion and the Definition of 'Religion' in International Law." *Harvard Human Rights Journal* 16 (2003): 189-215.

Gunn, T. Jeremy. "The Organization for Security and Co-Operation in Europe and the Rights of Religion or Belief." Peter G. Danchin and Elizabeth A. Cole, eds., *Protecting the Human Rights of Religious Minorities in Eastern Europe*. New York City: Columbia University Press, 2002.

de Jong, Cornelis D. *The Freedom of Thought, Conscience and Religion or Belief in the United Nations (1946-1992)*. Antwerpen: Intersentia-Hart, 2000.

Hill, Mark, ed. *Religious Liberty & Human Rights*. Cardiff: University of Wales Press, 2002.

Lehnhof, Lance. "Freedom of Religion Association: The Right of Religious Organizations to Obtain Legal Entity Status Under the European Convention." *BYU Law Review* (2002): 561-609.

Lerner, Natan. *Religion, Beliefs, and International Human Rights*. Maryknoll: Orbis Books, 2000.

Lindholm, Tore, W. Cole Durham Jr. and Bahia G. Tahzib-Lie, eds. *Facilitating Freedom of Religion or Belief*. Leiden: Martinus Nijhoff, 2004.

Macdonald, R. St. J., F. Matscher, and H. Petzold, eds. *The European System for the Protection of Human Rights*. Dordrecht: Martinus Nijhoff Publishers, 1993.

Marano, Venerando. "Unione europea ed esperienza religiosa: Problemi e tendenze alla luce della Carta dei diritti fondamentali dell'Unione europea." *Il diritto ecclesiastico* (2001): Parte I, 862-904.

McKean, Warwick. *Equality and Discrimination Under International Law*. Oxford: Clarendon Press, 1983.

Morsink, Johannes. *The Universal Declaration of Human Rights: Origins, Drafting, and Intent*. Philadelphia: University of Pennsylvania Press, 1999.

Nowak, Manfred. *U.N. Covenant on Civil and Political Rights: CCPR Commentary*. Kehl/Strasbourg/Arlington: N. P. Engel, 1993.

Odio Benito, Elizabeth. *Elimination of all forms of intolerance and discrimination based on religion or belief*. New York: United Nations, 1989.

Robbers, Gerhard, ed. *Church Autonomy: A Comparative Survey*. Frankfurt am Main: Peter Lang, 2001.

Robbers, Gerhard, ed. *State and Church in the European Union*. Baden-Baden: Nomos, 1996.

Tahzib, Bahiyyih G. *Freedom of Religion or Belief: Ensuring Effective International Legal Protection*. Boston: Martinus Nijhoff, 1996.

Thornberry, Patrick. *International Law and the Rights of Minorities*. Oxford: Clarendon Press, 1991.

van Dijk, P. and G. J. H. van Hoof. Theory and Practice of the European Convention on Human Rights. 3d ed. The Hague: Kluwer International Law, 1998.

van der Vyver, Johan D. and John Witte, Jr., eds., Religious Human Rights in global Perspective: Legal Perspectives The Hague: Martinus Nijhoff Publishers, 1996.

Հավելված III

ԵԱՀԿ փորձագետների խմբի ընթացակարգերը օրենքի նախագծի վերանայման (կամ խորհրդատվության) համար

Այս հավելվածում նկարագրված են այնպիսի հանգամանքներ, որոնց համաձայն կրոնի կամ համոզմունքի վերաբերյալ օրենսդրությունը կարող է վերանայվել Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական Հաստատությունների և Մարդու Իրավունքների Գրասենյակի (ԺՀՄԻԳ) կրոնի և համոզմունքի ազատությունների հիմնահարցերով զբաղվող փորձագետների խորհրդատվական խմբի (ԽՈւՄԲ) կողմից: Չնայած այս բաժնում նկարագրված են տիպական հանգամանքները, երբ օրենսդրության վերանայում կարող է տեղի ունենալ, սակայն գոյություն ունեն նաև այլ ճանապարհներ, որով պետությունը կարող է դիմել ԽՄԲի օգնությանը, ներառյալ խորհրդակցություններ խորհրդարանական հանձնաժողովների կամ պետական մարմինների հետ: Բացի այդ, ԽՈւՄԲը պարտավորվում է համագործակցել այլ հաստատությունների հետ, այդ թվում Վենետիկի հանձնաժողովի, իրականացնելու կրոնի կամ համոզմունքների վերաբերյալ օրենսդրության համատեղ վերանայում:

ԵԱՀԿ մասնակից պետությունների կրոնի կամ համոզմունքների հետ կապված օրենքների նախագծերի: ԽՄԲի կողմից վերանայման տիպական հանգամանքները հետևյալն են.

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը և պետությունը նախնական կապեր են հաստատում: ԵԱՀԿ-ն ԺՀՄԻԳ-ի միջոցով առաջարկում է տեխնիկական աջակցություն ու խորհրդատվություն օրենքների նախագծերի վերաբերյալ՝ շահագրգիռ մասնակից պետությունների պաշտոնական խնդրանքից հետո: Հանդուրժողականության և անխտրականության վերաբերյալ NԵ4/03 որոշմամբ ԵԱՀԿ նախարարների խորհուրդը «թափանցիկ և անխտրական օրենքների, կանոնակարգերի, պրակտիկաների և քաղաքականության

միջոցով պարտավորվում է երաշխավորել և դյուրացնել անհատի ազատությունը դավանելու և հետևելու կրոնի կամ հանոգմունքների, միայնակ կամ ուրիշների հետ համատեղ: [Այն խրախուսում է] մասնակից պետություններին դիմելու ԺՅՄԻԳ-ի և կրոնի կամ հանոգմունքի ազատության փորձագետների խմբին աջակցության համար»: Համաձայն վերոհիշյալ փաստաթղթերի, օրենսդրության վերլուծությունը կամ վերանայումը տեղի կունենա մասնակից պետությունում միայն այդ մասնակից պետության համապատասխան պետական մարմնի կողմից աջակցության խնդրանքի կամ հրավերի ստացումից հետո: Եթե պետությունը քննարկում է նոր օրենսդրության ընդունման հարցը, սակայն դեռ չունի նախագիծ, այդ պարագայում խումբը ևս կարող է խորհրդատվություն մատուցել:

Օրենսդրության վերանայումն հրականացնող խմբի անդամ(ներ)ը: Համապատասխան քաղաքական հաստատության կողմից օրենքի վերանայման հրավեր կամ աջակցության խնդրանք ստանալուց հետո, ԺՅՄԻԳ-ը որոշում կկայացնի, թե ինչպես ընթացք տալ գործին: Եթե որոշվում է ընթացք տալ խնդրանքին կամ հրավերին, ապա ԺՅՄԻԳ-ը նախնական պատասխանատվությունը դնում է խմբի անդամի (անդամների) վրա և օրենսդրության նախագիծը անմիջապես տրամադրվում է խմբի բոլոր անդամներին՝ մեկնաբանելու և իրենց տեսնակյունից աջակցելու համար՝ այսպիսով երեշխավորելով, որ վերջնական վերանայված տեքստը ողջ խմբի կողմից պատրաստված փաստաթուղթ է:

Կարևոր տեքստերի թարգմանություն: Օրենքի նախագիծը, ինչպես նաև այլ կարևոր տեքստերը, անհրաժեշտության դեպքում կթարգմանվեն ԺՅՄԻԳ-ի կողմից և կտրամադրվեն խմբին:

Համապատասխան օրենքների ու պրակտիկաների ամբողջական փաթեթի վերանայում: Օրենքի նախագծի վերանայման ժամանակ խումբը հաշվի կառնի համապատասխան օրենքի կամ պրակտիկայի ամբողջական փաթեթը (օրինակ սահմանադրու-

թյունը, քաղաքացիական օրենսգիրքը, քրեական օրենսգիրքը և այլն) և կվերլուծի հատկապես օրենքի նախագծի այն կողմը, թե ինչպես է կրոնի կամ հանոգմունքի ազատությունը ներկայացված օրենսդրական համակարգում:

Պետություն այցելելը (անհրաժեշտության դեպքում): Անհրաժեշտության դեպքում կարող է կազմակերպել այցելություն երկիր պատկերացում կազմելու համար համապատասխան օրենքների և պրակտիկաների ամբողջական փաթեթի վերաբերյալ, հանդիպելու պետական պաշտոնյաների, պատգամավորների, քաղաքական կուսակցությունների, կրոնական և հավատքային խմբերի, գիտնականների և հասարակական կազմակերպությունների, որպեսզի ապահովվի ԵԱՀԿ խթանող և աջակցող քաղաքանությունը հանրային սեկտորի հետ խորհրդակցությունների անցկացման և օրենսդրական նախաձեռնություններում քաղաքացիական հասարակության ներդրման հարցում¹⁸: Անհրաժեշտության և նպատակահարմարության դեպքում կկազմակերպվեն կլոր սեղան քննարկում այս գործընթացին հանրային մասնակցությունը հեշտացնելու նպատակով:

Պետության և հասարակական կազմակերպությունների համար կարևոր խնդիրների առանձնացում: Համապատասխան պետական մարմինների հետ հանդիպումները կայանելու են պետության համար կարևորություն ունեցող հարցերի ճշգրտման, ինչպես նաև օրենքի նախագծով ենթադրվող նպատակների պարզաբանման համար: Համապատասխան պետական մարմինները կնշանակեն պատասխանատու պաշտոնյայի օրենքի վերանայման ընթացքում կապի մեջ լինելու համար:

Խորհրդակցություններ ԵԱՀԿ առաքելությունների, Եվրոպայի խորհրդի և միջազգային կազմակերպությունների հետ: Կկազ-

18. Մոսկովյան հանդիպման փաստաթուղթ 1991թ. 18.1: Օրենսդրությունը ընդունվում է ժողովրդի կամքը արտացոլող բաց գործընթացի արդյունքում, տե՛ս նաև Կոպենհագենի փաստաթուղթը 1990թ., հոդված 5.8:

մակերպվեն հանդիպումներ ԵԱՀԿ առաքելության հետ, որի հետ խորհրդակցություններ կանցկացվեն գործընթացի հենց սկզբից, Եվրոպայի խորհրդի հետ և երկրում գործող այլ միջազգային կազմակերպությունների հետ նրանց մոտեցումները պարզելու նպատակով:

Խմբի անդամ(ներ)ի կողմից պատրաստված վերլուծության նախագիծ: Վերը նշված համապատասխան խորհրդակցություններ անցկացնելուց հետո նախագծի համար հիմնական պատասխանատվություն ունեցող անձինք կպատրաստեն նախագիծ Խմբի ներսում շրջանառելու համար:

Վերանայման նախագծի շրջանառությունը ամբողջ Խմբի շրջանակներում: Բոլոր ջանքերը կգործադրվեն վերանայման նախագիծը Խմբի բոլոր անդամների համար հնարավորին շուտ շրջանառության մեջ դնելու նպատակով, որպեսզի նրանք ժամանակ ունենան լրացուցիչ մեկնաբանություններ տալու և դրանք վերանայման տեքստի մեջ ընդգրկելու համար: Սա նաև հնարավորություն է տալիս սկզբնական փուլում Խմբի այլ անդամներին վերանայման տեքստի մեջ լրացուցիչ կամ այլընտրանքային ոլորտներ առաջարկելու համար:

Խմբի միացյալ մեկնաբանությունները և վերանայված նախագծի պատրաստումը: Նախագիծը պատրաստած անձը իրար կմիացնի Խմբի բոլոր մեկնաբանությունները՝ ապահովելով, որ վերջնական փաստաթուղթը Խմբի կոնսենսուսային դիրորոշումն է: Վերանայված նախագիծն անհրաժեշտության դեպքում կրկին կշրջանառվի Խմբի անդամների միջև, հատկապես եթե դրսի աղբյուրներից, ինչպիսին Վենետիկի հանձնաժողովն է, ստացվել և ներառվել են մեկնաբանություններ և դրանից հետո միայն փաստաթուղթը կուղարկվի ԺՅՄԻԳ վերջնական խմբագրման և կտրամադրվի մասնակից պետության համապատասխան մարմնին: Երբ մեկնաբանությունները համապատասխան մարմնի կողմից քննարկելու համար պատշաճ ժամանակ անցած կլինի, այն կտրամադրվի այլ շահագրգիռ կողմերի՝ պետական հաստատու-

թյունների, պատգամավորների, կրոնական և հավատքային խմբերի, գիտնականների, հասարակական կազմակերպությունների, միջազգային պետական կազմակերպությունների և այլն: Անհրաժեշտության դեպքում վերանայված տեքստը կթարգմանվի ԺՅՄԻԳ-ի կողմից:

Փաստաթղթի ներկայացմանը հաջորդող այցելություն (անհրաժեշտության դեպքում): Հնարավորության և նպատակահարմարության դեպքում փաստաթղթի ներկայացմանը կհաջորդի այցելություն քննարկելու համար վերանայված տեքստը շահագրգիռ մարմնի, պետական հաստատությունների, պատգամավորների, կրոնական և հավատքային խմբերի, գիտնականների, հասարակական կազմակերպությունների, միջազգային պետական կազմակերպությունների և այլոց հետ:

Խորհուրդը չի ներկայացնում փաստաթուղթը կանոնադրական լեզվով: Խորհրդի աշխատանքը զուտ խորհրդատվական է, որպեսզի նպաստի միջազգային չափանիշների մեկնաբանմանը և մասնակից պետությունների ԵԱՀԿ պարտավորություններին: Մեկնաբանությունները պատրաստելու գործընթացի ընթացքում Խումբը ձեռնպահ մնա կանոնադրական լեզվի գործածումից: Այն չպետք է մեկնաբանի արդեն ձևակերպված լեզուն, այլ միայն անհրաժեշտության դեպքում մատնանշի թերությունները և հղում կատարի միջազգային փաստաթղթերին և պարտավորություններին:

**ԿՐՈՆԻ ԿԱՄ ՀԱՄՈՋՄՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐ**

**Guidelines for Review of Legislation Pertaining to
Religion or Belief**

«Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափեր՝ 60x84 1/16, ծավալը՝ 6 տպ մամ.
Տպաքանակը՝ 1000 օրինակ